№ 29 ՇԱԲԱԹ ՄԱՐՏԻ 9 **1896** ՇԱԲԱԹ ՄԱՐՏԻ 9 № 29

ՔՍԱՆՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
Կամ Tiflis. Rédaction «Mschak».
ՏԷԼԷՖՕՆ № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Ցայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.

ՏԷԼԷՖՕՆ № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Քաղաքային Վարչութեան և Հանգուցեալ քաղաքագլուխ

ՊՕՂՕՍ ԻԶՄԱՑԼԵԱՆԻ

յիշատակը յաւերժացնելու համար կազմված յանձնաժողովի Միացեալ-Ատեանը սրանով տեղեկացնում է հասարակութեան, որ կիրակի, այս մարտի 10-ին, Վանքի մայր-եկեղեցում կը մատուցվի պատարագ, և ապա, մայր-եկեղեցու բակում կը կատարվի հոգեհանդիսա: Պատարագի սկիզբն է 10 ժամին, հոգեհանդիսաը՝ ցերեկվայ 12 ժամին: 1—1

Շաբաթ օր, մարտի 9-ին, Մողնու ս. Գէորգ եկեղեցում,

ՍՏԵՓԱՆ ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆ ԳԷՈՐԳԵԱՆՑԻ

մահվան չորրորդ տարեդարձին, կը կատարվի հոգեհանդիսա, որի մասին հանգուցեալի եղբայրը և որդիքը յայտնում են իրանց ազգականներին և բարեկամներին: 1—1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Զէմստվօի ինքնավարութիւն Կովկասում. — ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Օրէցօր. Գիտակցական բարօրութիւն. Բանտերի բարւոքումը. Ինքնուս փասաբաններ. Մատենագրութիւն. Նամակ Ախալքալաքից. Նամակ Խմբագրութեան. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Վերջին տեղեկութիւններ. Նամակ Պարսկաստանից. Քրիստոնեաները Պարսկաստանում. Աշխատաւորների բնակարաններ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Թիւրքիայի ծովեզերքից.

ԶԵՄՍՏՎՕԻ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹԻՒՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ

—

Երկու տարի սրանից առաջ Թիֆլիսի ազնուականութեան ժողովում խնդիր ծագեց զէմստվօ մտցնելու մասին: Ընտրվեց մի յանձնաժողով, որ պէտք է մշակէր խնդիրը և ներկայացնէր հետևեալ ժողովին: Այժմ յանձնաժողովը վերջացրել է իր յանձնարարութիւնը և պատրաստել է զեկուցում, որ պէտք է շուտով քննութեան նիւթ դառնայ ազնուականների ժողովում:

Անկասկած՝ զեմստվո մտցնելու առաջարկը, որը համակրութեամբ ընդունվեց թէ մամուլի և թէ ազնուականութեան կողմից, այժմ որոշ ձևակերպութիւն կը ստանայ ազնուականների ժողովում, և այդպէս կը ներկայացվի բարձր կառավարութեան հայեցողութեան:

Այդ առիթով մենք հարկաւոր ենք համարում նորից դառնալ այդ հարցին, որին արդէն մենք նուիրեցինք մի շարք յօդուածներ: Զեմստվօի հիմնարկութիւնները նոյնքան պահանջ են մեր նահանգական կեանքի համար, որքան քաղաքային ինքնավարութիւնը քաղաքների համար: Զեմստվօն նոյն ինքնավարութիւնն է, ինչ որ քաղաքային ինքնավարութիւնը, միայն նա բընում է աւելի ընդարձակ տարածութիւն և պահանջում է մարդկանց աւելի մեծ մասնակցութիւն:

Զեմստվօի պարտաւորութիւնների մէջ մտնում են այն բոլոր կէտերը, որոնք նպատակ ունեն բարձրացնել ազգաբնակութեան տնտեսական կեանքը, բարեկեցութիւնը և զարգացումը: Ցիշենք այդ կէտերից գլխաւորները: Զեմստվօն լուրջ կերպով զբաղվում է նահանգի ազգաբնակութեան այն տուրքերի և հարկերի խնդրով, որոնք վերցվում են տեղական պէտքերի համար. նա շարունակ հետևում է, որ գիւղական ազգաբնակութիւնը հացի պաշար ունենայ. նա բարւոքում է հաղորդակցութիւնը գաւառի զանազան մասերում, անցկացնելով նոր ճանապարհներ և պահպանելով արդէն եղածները. սահմանում է գիւղերի մէջ ներքին պօստային հաղորդակցութիւն. մտցնում է դպրոցների ապահովութեան: Նոյն իսկ այն դատաւորները, որոնք ոչ թէ չէրիաթի, այլ պետական, քաղաքական օրէնքի վրա են հիմնում իրանց վճիռները, նոյնպէս մօլլաների ատենապետութեան ներքև են գտնվում: Բացառութիւն են կազմում միայն վաճառականական ատեանները, որոնց նախագահները իւլէմայից չեն, և կարող են քրիստոնեաներ էլ լինել, թէև միշտ մեծագոյն մասը մահմէտականներ են: Ուրեմն այս կերպով ոչ թէ միայն կրօնական պաշտամունքը, այլ և երկրի օրէնսդիրական մի կարևոր մասը՝ դատական իրաւունքը իւլէմայի ձեռքումն է, որով նրա նշանակութիւնն ու ազդեցութիւնը մեծապէս բարձրանում է ժողովրդի աչքում: Ոչ մի յեղափոխութիւն, ոչ մի շարժում չէ եղած Կ. Պոլսում, որի մէջ իւլէման կամ գրգռող և կամ առաջնորդ չը հանդիսանար: Պաշտօնեաները այնքան հեղինակութիւն չունեն զօրքի վրա, որքան սոֆթաներն ու մօլլաները, որոնք, ինչպէս օրինակները ցոյց են տուած, նոյն իսկ իրանց հրամանատարների դէմ կարող են զինուորներին գրգռել և ապստամբեցնել:

Թիւրքիայի մէջ կառավարութիւնը, մանաւանդ այժմ, ոչ անհաւատարիմ պաշտօնեաներից այնքան երկիւղ է կրում, ոչ էլ զօրքից է վախենում. նրա գլխաւոր վախը իւլէման է, որի մէջ զժգոհութեան սերմը երբէք արմատախիլ չէ եղած, որը միշտ ատիթ է ունեցած գանգատվելու կառավարութեան դէմ և որը ներքին յեղափոխութեան ժամանակ ամենից առաջ ինքն է գլուխ բարձրացրել և ինքն է առաջնորդել: Նոյնն է հիմա էլ: Թիւրքաց զօրքը կատարելապէս կրաւորական դեր է կատարում. նա այնպէս է վարժված, որ անկարող է զժգոհութեան աղբիւր դառնալ, եթէ արտաքին հզօր դրդում չը լինի: Կար ժամանակ, որ զօրքը, եթէ մի ամսական ռոճիկ կանոնաւոր չը ստանար, ահագին աղմուկ կը յարուցանէր և ամենքը կը սկսէին նրանից դողալ. այժմ հանգամանքներն ու տրամադրութիւնը այնպէս են փոխված, որ ահա ամիսներ, նոյն իսկ ամբողջ տարիներ ռոճիկ չեն ստանում, ուտելիքից զուրկ են և հագուստի կարօտ, բայց հնազանդութեան դէմ չեն գործում, եթէ իրանց մեծերից կամ իւլէմայից դրդված չեն լինում,—որովհետև զօրքը կազմված է բուն Թիւրք, գիւղացի, երկրագործ կամ պարտիզպան ժողովրդից, որն, ինքն ըստ ինքեան, իր բնաւորութեամբ, այնքան էլ վատ հակումներ չունի, ընդհակառակն, պարկեշտ է, խոնարհ, և իբրև չափազանց կրօնասէր, մեծապէս յարգող է իր մեծերին և մանաւանդ մօլլաներին:

Իւլէմայի հեղինակութեան գլխաւոր կռուանները դատաւորի մէջ և կազմակերպում է հրդեհի ժամանակ շուտափոյթ օգնութիւն հասցնելու գործը. իր ձեռքն է առնում գաւառի բժշկական գործը. պահում է բժիշկներ, բաց է անում հիւանդանոցներ, նշանակում է նոյնպէս առանաբոյժեր՝ գիւղացիների անասուններին բժշկելու համար. նպաստում է դպրոցների աւելացնելուն. մտցնում է արհեստներ ու գիւղատնտեսական զանազան կատարելագործութիւններ. օգնում է տնտավաճառներ և վաճառանոցներ բանալուն և յարուցանում է զանազան խնդիրներ կառավարութեան առաջ՝ ժողովրդի բարեկեցութիւնը զարգացնելու նպատակով:

Ռուսաստանում զեմստվօն ունի երկու տեսակ վարչութիւն՝ գաւառական և նահանգական, այնպէս, ինչպէս գոյութիւն ունի կովկասում քաղաքային վարչութիւնը կամ ուպրաւան: Այդ վարչութիւնները հաշիւ են տալիս զեմստվօի ժողովներին, որոնք նման են գումայի ժողովներին, այն զանազանութեամբ, որ գուման ժողովվում է պարբերաբար ամբողջ տարվայ ընթացքում. մինչդեռ զեմստվօի ժողովները լինում են տարին մի մի անգամ և շարունակվում են անընդհատ մի քանի օր՝ տասն-քսան օր: Այդ ժողովներին մասնակցող ձայնաւորները ընտրվում են առանձին ընտրողական շրջաններում՝ գաւառի զանազան մասերում, գիւղական ազգաբնակութեան կողմից:

Դրանք են ահա այն գլխաւոր կէտերը, որ օրէնքը որոշել է զեմստվօի գործունէութեան համար: Դրանց վրա աւելանում են և այն բոլոր չը նախատեսված խնդիրները, որոնք ունեն տեղական բնաւորութիւն և վերաբերում են ժողովրդի բարեկեցութեան խնդրին:

Մենք չենք կասկածում, որ Կովկասը կունենայ զեմստվօի ինքնավարութիւն: Եւ դրա հետ լիայոյս ենք, որ մեր ազգաբնակութիւնը ցոյց կը տայ փորձով, թէ նա արժանի է այդ տեսակ ինքնավարութեան:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՕՐԷՑՕՐ

XV

Մի կարճատև, բայց կատաղի բանակռիւ տեղի ունեցաւ «Новое Обозрѣніе», «Իվերիա» և «Кавказъ» լրագիրների մէջ՝ նորերս վախճանված վրացի Գաբրիէլ եպիսկոպոսի անձնաւորութեան առիթով:

Ահա պատճառը: Տեղական վրացի գրողներից մէկը, Խօնելի, «Кавказъ» լրագրի մէջ նուիրելով Գաբրիէլ եպիսկոպոսին, նրա մահվան առիթով, մի մեծ և վերին աստիճանի գովասանական յօդուած, թոյլ էր տուել իրան մի քանի, պէտք է խոստովանել, վերին աստիճանի մեղմ և շատ թեթև քննադատութիւններ հանգուցեալի մասին: Եւ ահա այդ մեղմ և վերին աստիճանի թոյլ քննադատութիւնը առիթ տուեց «Իվերիա» լրագրին և մասամբ «Новое Обозрѣніе» լրագրին մի կատաղի յարձակում գործել Խօնելիի, ինչպէս և «Кавказъ» լրագրի դէմ այն պատճառով, որ առաջինը համարձակվել է նկատողութիւններ անել Գաբրիէլ եպիսկոպոսի դէմ, իսկ երկրորդը վատահացել է տպագրել այդ տեսակ մի յօդուած: «Իվերիա» լրագիրը, յանուն վրաց ազգի, յանուն ամբողջ Վրաստանի, շանթեր էր արձակում և սպառնալիքներ կարդում, վիրաւորված տեսնելով իր ազգի պատիւը, մի անհնարին անձնաւորութեան յիշատակը:

Մեզ միանգամայն զարմացրեց այդ փաստը: Ասում ենք զարմացրեց, որովհետև երբէք չէինք կարող երևակայել, թէ վրաց մամուլը, վրաց հասարակութիւնը այդ աստիճանի դիւրազգաց են դէպի մեռած գործողների յիշատակը, և այդ աստիճան նախանձախնդիր իրանց հասարակական գործողների պատիւն, մանաւանդ որ Խօնելիի յարձակումը Գաբրիէլ եպիսկոպոսի մի քանի պակասութիւնների վրա, միանգամայն կարչում, անհետանում է այն ոգևորված, նոյն իսկ յափշտակված գովասանքների առաջ, որոնցով վերաբերվում էր նա դէպի մեռած եպիսկոպոսը:

Մենք Խօնելիի համակրողներից չենք: Ընդհակառակն, մեզ միանգամայն տանելի է գրողների այն տիպը, որին պատկանում է այդ պարոնը, իբրև մուրնալիստ: Նա երբեմն մօտիկ աչխատակից էր «Новое Обозрѣніе» լրագրին, երբ դա խմբագրվում էր Ստեպանովի ձեռքով, իսկ այժմ մուտք է գործել «Кавказъ» լրագրի խմբագրութեան մէջ՝ ընթանալով բոլորովին հակառակ ուղղութեամբ, և չենք էլ զարմանայ, եթէ նոյն պարոնը մի քանի ժամանակից յետոյ «Кавказъ»-ից հեռանալով՝ մուտք գործէ մի ուրիշ խմբագրութեան մէջ, և սկսի բոլորովին այլ երգեր երգել: Սակայն կարիք էլ չը կայ երկարելու: Նոյն իսկ այն դատաւորները, որոնք ոչ թէ չէրիաթի, այլ պետական, քաղաքական օրէնքի վրա են հիմնում իրանց վճիռները, նոյնպէս մօլլաների ատենապետութեան ներքև են գտնվում: Բացառութիւն են կազմում միայն վաճառականական ատեանները, որոնց նախագահները իւլէմայից չեն, և կարող են քրիստոնեաներ էլ լինել, թէև միշտ մեծագոյն մասը մահմէտականներ են: Ուրեմն այս կերպով ոչ թէ միայն կրօնական պաշտամունքը, այլ և երկրի օրէնսդիրական մի կարևոր մասը՝ դատական իրաւունքը իւլէմայի ձեռքումն է, որով նրա նշանակութիւնն ու ազդեցութիւնը մեծապէս բարձրանում է ժողովրդի աչքում: Ոչ մի յեղափոխութիւն, ոչ մի շարժում չէ եղած Կ. Պոլսում, որի մէջ իւլէման կամ գրգռող և կամ առաջնորդ չը հանդիսանար: Պաշտօնեաները այնքան հեղինակութիւն չունեն զօրքի վրա, որքան սոֆթաներն ու մօլլաները, որոնք, ինչպէս օրինակները ցոյց են տուած, նոյն իսկ իրանց հրամանատարների դէմ կարող են զինուորներին գրգռել և ապստամբեցնել:

Թիւրքիայի մէջ կառավարութիւնը, մանաւանդ այժմ, ոչ անհաւատարիմ պաշտօնեաներից այնքան երկիւղ է կրում, ոչ էլ զօրքից է վախենում. նրա գլխաւոր վախը իւլէման է, որի մէջ զժգոհութեան սերմը երբէք արմատախիլ չէ եղած, որը միշտ ատիթ է ունեցած գանգատվելու կառավարութեան դէմ և որը ներքին յեղափոխութեան ժամանակ ամենից առաջ ինքն է գլուխ բարձրացրել և ինքն է առաջնորդել: Նոյնն է հիմա էլ: Թիւրքաց զօրքը կատարելապէս կրաւորական դեր է կատարում. նա այնպէս է վարժված, որ անկարող է զժգոհութեան աղբիւր դառնալ, եթէ արտաքին հզօր դրդում չը լինի: Կար ժամանակ, որ զօրքը, եթէ մի ամսական ռոճիկ կանոնաւոր չը ստանար, ահագին աղմուկ կը յարուցանէր և ամենքը կը սկսէին նրանից դողալ. այժմ հանգամանքներն ու տրամադրութիւնը այնպէս են փոխված, որ ահա ամիսներ, նոյն իսկ ամբողջ տարիներ ռոճիկ չեն ստանում, ուտելիքից զուրկ են և հագուստի կարօտ, բայց հնազանդութեան դէմ չեն գործում, եթէ իրանց մեծերից կամ իւլէմայից դրդված չեն լինում,—որովհետև զօրքը կազմված է բուն Թիւրք, գիւղացի, երկրագործ կամ պարտիզպան ժողովրդից, որն, ինքն ըստ ինքեան, իր բնաւորութեամբ, այնքան էլ վատ հակումներ չունի, ընդհակառակն, պարկեշտ է, խոնարհ, և իբրև չափազանց կրօնասէր, մեծապէս յարգող է իր մեծերին և մանաւանդ մօլլաներին:

Իւլէմայի հեղինակութեան գլխաւոր կռուաններից մէկն էլ կազմում է նրա նիւթական ոյժը: Ոչ մի տեղ, գուցէ և ոչ մի կրօնի տաճար այնքան ընդարձակ կալուածների տէր չէ, որքան մզկիթները Թիւրքիայում: Մզկիթներին յատկացված կալուածները ընդհանուր անունով կոչվում են վաքֆ կամ էվքաֆ (վաքֆներ): Թող չը զարմանայ ընթերցողը, եթէ ասենք, որ բովանդակ Թիւրքիայի անշարժ կալուածների երեք քառորդը վաքֆ է: Թիւրքիայի թէ քաղաքների և թէ գիւղերի մէջ չէնքերի մեծ բազմութիւն, երբեմն ամբողջ թաղեր՝ մզկիթների սեփականութիւն են կազմում *): Թիւրքիայի պետական ամենախոյլ կողմերից մէկն էլ այս վաքֆի դրութիւնն է: Այս կալուածները կառավարելու համար յատուկ մինիստրութիւն կայ հիմնված (էվքաֆ նէզարէթի): Վաքֆը բաժանված է 3 դասի: Առաջին դասը մզկիթների բացարձակ սեփականութիւնն է, և իբրև հոգևորական ինչք՝ ծառայում է իւլէմայի պահպանութեան: Երկրորդ դասը՝ հասարակաց չէնքեր են, աղբիւրներ, պարտէզներ և զանազան

*) Երբ 1878 թ-ին Բաթում ռուսաց տիրապետութեան տակ անցաւ, քաղաքի ամենամեծ թաղը՝ Ադիզիէ ամբողջապէս վաքֆ էր (այս բառը սխալմամբ են վաքուֆ ասում). և դեռ մինչև հիմա քաղաքի և Բաթումի մզկիթի մէջ հողային կնճռոտ խնդիր կայ:

կանգ առնել գրողների այդ «տիպի» վրա, քանի որ հայ ընթերցող հասարակութիւնը նոյն իսկ հայոց մամուլի մէջ ամեն օր տեսնում է հազար անգամ աւելի կատարելագործված և սրբված «գրական մտավաճառներ», որոնք մի խմբագրութիւնից հալածվելով, միւսի մէջ ապաստանելով, այսօր հայհոյում են այն, ինչ որ երէկ պաշտում էին, վաղը կը պաշտեն այն, ինչ որ այսօր ատելով ատում են...

Բայց հարցը խօնելիի և այդ տեսակ գրողների մասին չէ, այլ այն ընդհանուր զայրոյթի և ընդհանուր կատաղութեան մասին, որ ինչպէս երեւում է, տիրեց ամբողջ վրաց մամուլին և հասարակութեան մի թեթև, նոյն իսկ չատ մեղմ քննադատութեան պատճառով: Առաջարկելով հայ հասարակութեան այդ փաստը, մենք ակամայ հարցնում ենք. մթթէ, յիրաւի, վրաց հասարակութիւնը և վրաց մամուլը աւելի բարձր, աւելի դիւրազգաց, աւելի պարտաճանաչ են, քան թէ հայոց մամուլը և հայ հասարակութիւնը:

Վրաց հասարակութիւնը և մամուլը վրդովված է, որ մի խօնելի իրան թոյլ է տալիս նոյն իսկ մի փոքրիկ քննադատութիւն (ահագին դովասանքների հետ միասին) Գաբրիել եպիսկոպոսի մասին: Մենք, հայերս, իրաւունք ունենք ապշելու: Իրաւունք ունենք, որովհետև մենք չենք յիշում և ոչ մի հատ օրինաւոր հայ գործող, հայ հոգևորական, որի դիակի վրա հայոց փողոցային մամուլը ամենաանպատկառ խաղեր չը սարքէր:

Մեռաւ մի այնպիսի գործող, ինչպէս Գրիգոր Արծրունին, և ահա հայոց ամօթալի լրագրիների մէջ, այն էլ արտաւորված մարդկանց ձեռքով, սկսվեց մի այնպիսի չը տեսնված, անվայել, խեղկատակ վերաբերմունք դէպի հանգուցեալը, երբ դեռ նա հողին էլ չէր յանձնված, որ եթէ վրաց հասարակութիւնը իմանար, չը գիտենք ինչ պէսք է անէր...

Եւ եթէ Գրիգոր Արծրունու վերաբերմամբ այդ փողոցային մամուլը այդպէս վարվեց, ինչպէս պէսք է վարվէ աւելի համեստ գործողների վերաբերմամբ: Մենք այդ էլ տեսանք. մեռաւ մի համեստ, բայց վերին աստիճանի օրինաւոր գործող, ինչպէս Լեոն Խօջայեան,—սկսեցին նոյն կլօունութիւնները դեռ չը թաղված դիակի դէմ. մեռնում է մի համեստ, բայց օրինաւոր մարդ, ինչպէս էր դիցուք Պօղոս Մելիք-Կարագեօզեան,—նոյն անպատկառ կլօունութիւնները. մեռնում է նոյն իսկ մի կին, մի հազուագիւտ հայուհի, որի վերաբերմամբ իրաւունք ունէինք մի փոքր պատկառանք սպասելու, տիկին Մելիք-Ադամալեան,—էլի նոյն անպատկառ խեղկատակութիւնները:

Այդ դեռ նորերն են. հայ հասարակութիւնը յիշում է և հները, յիշում է, թէ ինչ անվայել կերպով վերաբերվեց դէպի հանգուցեալ Ստեփաննոս Նազարեանի գործունէութիւնը նոյն անսկզբունք, ծախու մամուլը, և ինչ փողոցային տեսակէտներ ունի դէպի մեր կենդանի, փոքր ի չատէ արժանաւոր, մաքուր, աշխարհական թէ հոգևորական գործողները, որոնց բոլորի վրա խաւարամիտ մամուլը իր կեղտոտ ձեռքերով անդադար ցեխ է շպրտում, կատաղած միայն այն բանից, որ նրանք չեն կեղծում, իրանց չեն ծախում, չեն շողոքորթում և չեն ստում...

Եւ ահա յիշելով հայոց փողոցային մամուլի այդ ստոր արարքները, տեսնելով հայ հասարակութեան սառնութիւնը դէպի այդ զզուելի փաստերի անվերջ շարքը.—մենք ակամայ հարցնում ենք. միթէ, ճշմարիտ, վրաց մամուլը և վրաց հասարակութիւնը աւելի զիւրազգաց, աւելի նախանձախնդիր է և ընդունակ՝ ազատ պահելու իր գործողներին կեղտոտ ձեռքերից, քան թէ հայ հասարակութիւնը...

Խ. Մալումեան

ԳԻՏԱԿՑԱԿԱՆ ԲԱՐՕՐՈՒԹԻՒՆ

III

Բարեգործութեան այն լայն և մարդավայել սկզբունքը, որ մենք բացատրեցինք անցեալ անգամ, թէօրիաների աշխարհում չէ գտնվում և վաղուց գործադրվում է Եւրօպայի և Ամերիկայի չատ տեղերում: Եւրօպայում այդ սկզբունքը մանաւանդ զարգացած է անգլիական հասարակութեան մէջ: Ճիշդ է, Անգլիայում աղքատութիւնը դեռ ևս ահռելի չափեր ունի, դեռ ևս փողոցներում ապրող, մի ծածկված անկիւնից զուրկ և անօթութիւնից մեռնող աղքատների թիւը հաղարներով և տասնեակ հազարներով է հաշվում, բայց և այդպէս, տարէցտարի աւելի և աւելի հասկանալի է դառնում, որ չարիքի դէմ չէ կարելի մրցել ողորմութեան, գթութեան մեր առօրեայ հասկացողութիւններով: Ցալ միջոց, որ ամեն մէկը աշխատէ և ինքը հայթայթէ իր օրվայ հացը—ահա միակ փրկարար միջոցը, որ կարող է վերացնել մարդկութեան ամօթալի դրութիւնը: Բազմաթիւ հաստատութիւններ են հիմնվել, ուր ամեն մի աղքատ, նայած իր ընդունակութիւններին և այժերին, գործ է գտնում, աշխատում է և ապրում հանգիստ, չը դիմելով փողոցներում սրա ու նրա ջղերը ցնցելու միջոցին:

Մեզ չատ հեռու կը տանէր այդ հաստատութիւնների նկարագրութիւնը: Եւ բացի դրանից, մեզ համար աւելի համոզիչ կարող են լինել մեր երկրի, մեր կեանքի օրինակները: Ասիական ծուլութեան մի նշանն էլ այն է, որ երբ իմանում ենք թէ ինչ օրինակելի ջանքեր է անում քաղաքակիրթ մարդկութիւնը իր բարեկեցութեան համար, փոխանակ նախանձելու, փոխանակ դէպի բարի օրինակը ձգտելու, իսկոյն արդարանում ենք նրանով, որ Եւրօպան ուրիշ բան է, որ քաղաքակրթութիւնը դեռ հեռու է մեզանից և այլն:

Ուստի մենք օրինակ կը բերենք նոյն իսկ մեր, Անդրկովկասեան կեանքից:

Բագուի հայերը իրանց աղքատներին օգնելու համար հիմնել են աղքատանոց: Հաւաքել են փող, շինել են տուն, ուր ձրի օթեան են գտնում անճարները: Այդ հիմնարկութիւնը ամբողջապէս դրված է ողորմութեան սկզբունքի վրա: Եթէ աղքատանոցի հոգաբարձութիւնը չատ թէ քիչ եռանդ է գործ դնում, տարեկան մի յայտնի գումար հաւաքվում է աղքատանոցում պատսպարված թշուառներին ուտելիք բաժանելու համար. իսկ եթէ չէ, այն ժամանակ աղքատները, մերկ ու անօթի, դուրս են թափվում փողոցները և ձեռք են մեկնում սրան ու նրան: Չը նայած որ կայ տուն, չը նայած որ նոյն իսկ աղքատանոցի անունը մի տեսակ ֆիրմա է պրոֆեսիոնալ աղքատութեան համար, չը նայած այն հանգամանքին, որ հոգաբարձութիւնը յամենայն դէպս մի ձեռնհաս մարմին է թշուառութեան վերջին ծայրում օգնութեան հասնելու համար,—չը նայած այդ բոլորին, միայն բոլորովին անճար, բոլորովին միջոցներից զուրկ մարդիկ են համաձայնվում մտնել աղքատանոց, ապրել այնտեղ: Որովհետև ինչ է դա: Մի ծուլանոց և ուրիշ ոչինչ: Կեղտոտ, անտանելի կացութիւն, մի միջնավայր, ուր միայն աներեսութիւնը կարող է աջողութեան շանսեր ունենալ, ուր բարոյական հասկացողութիւններ չը կան և բարքերի ապականութիւն է տիրում: Ճիշդ է, աղքատանոցը մի աստիճան հեռացնում է իր մէջ ապաստանվածին դրսի աղքատների դրութիւնից, տալով նրան գոնէ բնակարան: Բայց դա բաւական չէ: Զրիակերութեան հասկացողութիւնը իր լայն ու մեծ պահանջներն ունի. և եթէ այդ պահանջներին ամբողջովին, մինչև վերջը, բաւարարութիւն չը տրվի, աղքատը նոյն աղքատն է, որ փողոցներում է գործում: Իսկ լիուլի բաւարարութիւն տալ, ի հարկէ, անկարելի է: Դրա համար հարկաւոր են ահագին միջոցներ. և եթէ լինեն էլ միջոցներ, եթէ աղքատների բարօրութիւնը լիապէս ապահովված էլ լինի, դարձեալ նպատակը հեռու կը մնայ, որովհետև այն ժամանակ կը մեծանայ աղքատների թիւը, այնպիսի չափերի կը հասնէ, որ ոչ մի ահագին դրամական միջոց չէ կարող բաւականանալ:—Պէտք է ասել թէ մարդու պատի, արժանաւորութեան տեսակէտից որքան անհամակրելի, որքան ամօթալի բան է պաշտօնապէս հովանաւորված ձրիակերութեան վարժեցնելը:

Նոյն իսկ բանտերում հետզհետէ վերացնում են ձրիակերութիւնը: Աշխատանքի պարտաւորութիւնը, որ ազնուացնող, հոգին և մարմինը կրթող սկզբունքն է, պիտի տիրէ ամեն մի տեղ, ուր հարկաւորութիւն կայ մարդուն դրստել, ոտքի կանգնեցնել: Բանտերը հետզհետէ կորցնում են իրանց աւանդական նշանակութիւնը. նրանք լոկ պատժի ահարկու տեղեր չեն, այլ և հաստատութիւններ, որոնց համար կալանաւորը դրստվելու, բարոյական կեղտերից ազատվելու արժանի մարդ է: Ի՞նչպէս են նրանք հասնում այդ նպատակին:

Թիֆլիսի Մետեխի բանտում վերջին տարիներս մի շարք փորձեր են կատարվել բանտարկվածներին արհեստներ սովորացնելու համար: Այդ փորձերից մի քանիսը կատարեալ աջողութեամբ են պսակվել: Բանտում կայ այժմ տպարան, որ լաւ գործում է: Կայ և լուացքի բաժին: Այնքան չատ է այն մարդկանց թիւը, որոնք կամենում են լուացք յանձնել բանտարկեալներին, որ վարչութիւնը մերժում է չատ և չատ պատուէրներ: Բաւական էր լաւ ուշադրութիւն դարձնել գործի վրա, բաւական էր որ բանտը ստանար պատուէրները խնամքով, բարեխղճութեամբ կատարողի անունը,—և ամեն մէկը ուրախութեամբ տանում է իր գործը այնտեղ:—Եւ բանտարկվածը, երբ դուրս է գալիս բանտից, չէ տանում իր հետ ձրի ապրուստի հասկացողութիւնը, այլ աշխատելու եռանդը. նա մինչև անգամ փող էլ է տանում իր հետ:

Այն, ինչ որ այնպիսի աջողութիւն գտնում է մի նեղ ու մանաւոր շրջանում, այն է բանում, կարող է աւելի մեծ չափերով գործադրվել և այն ահագին շրջաններում, ուր միակ վիճակը, միակ դրութիւնը և, ասենք ճիշդը, միակ յոյսը թշուառութիւնն է: Բանտի գործը մենք բերինք իբրև նմուշ այն գործունէութեան, որ իրապէս բարերարութիւն կը լինի տնանկների և անճարների համար:

Եւ երբ, հարցնում ենք, հասարակութիւնը կը սկսի հասկանալ, որ իր հիմնական, հաստատ բարօրութեան սկիզբն ու վերջը գտնվում է այն գիտակցութեան մէջ, որի մասին մենք խօսեցինք:

Լ.

ԲԱՆՏԵՐԻ ԲԱՐԻՈՒԹԻՒՆԸ

—

Բանտային վարչութիւնը յանձնվեց արդարադատութեան մինիստրութեան: Այժմ, սենատոր Տագանցևի նախագահութեամբ, կազմվում է մի յանձնաժողով, որ պէտք է բանտային օրէնսդրութիւնը վերաքննի: «Недѣля» շաբաթաթերթը նուիրել է այդ հարցին մի յօդուած, որից կարևոր ենք համարում առաջ բերել մի քանի կէտեր:

Էականը այն չէ, թէ ով է հսկելու բանտերի վրա, այլ այն թէ որչափ կը փոխվի բանտերի դրութիւնը, որչափ կը բարւոքվեն այն կարգերը և սովորութիւնները, որ հաստատվել են ժամանակի ընթացքում: Բանտերի բարւոքվելուց կախված են ոչ միայն յանցաւորների, այլ և անմեղ մարդկանց շահերը, որովհետև չատ անգամ բանտ են ընկնում մարդիկ թիւրիմացութեամբ կամ ձախորդ հանգամանքների չնորհիւ: Շատերը, բանտերում նստելուց յետոյ, ճանաչվում են դատարանի կողմից բոլորովին արդար և զուր տեղը պատժված: Եւ նոյն իսկ յանցաւորներն ենթարկվում են աւելորդ և անտեղի զրկանքների, որոնք կապ չունեն պատժի որոշումների հետ: Այդպիսով՝ ամբողջ բանտային վարչութիւնը արդարադատութեան հիմնարկութեան յանձնելը՝ մի լուրջ քայլ է և ոչ ձեւական մի փոփոխութիւն:

Պէտք է օրէնքի ճիշդ կատարումը յանձնվի ձեռնհաս անձերի: Ներկայումս բանտերի կառամարդկանց իրար հետ, կրօնի տարբերութեան պատճառով:

Ներկայ դարու սկիզբը, մի ուրիշ մահմէտական երկիր, որ անուանապէս միայն Թիւրքիային է պատկանում, այն է Եգիպտոսը, նոյնպէս իր բարենորոգումների դարաշրջին ունեցաւ, բայց այնտեղ նշանաւոր Մէհմէդ-Ալին չունեցաւ այն դժուարութիւնները, որին բաղխվում են չարունակ թիւրքական բարենորոգիչները՝ սկսած սուլթան Մահմուդից մինչև այսօր: Երբ Մահմուդ կռիւ էր մղում հին թիւրքերի և իւլէմայի, որ ասել է բուտինի և նախապաշարումների դէմ՝ իր բարենորոգչական ծրագիրներն առաջացնելու համար, Մէհմէդ Ալի արդէն կարողացել էր ճնշել իր հին արաբների և իր իւլէմայի դիմադրութիւնը, կազմակերպած էր բանակը նոր, եւրոպական ձևով և չնորհիւ այս նորոգութեան, այնքան ուժեղացած, որ պատերազմ բանալով իր սուլթանի դէմ, հետզհետէ տապալած, ջնջած էր նրա բանակները և վերջի վերջոյ նրան այնքան նեղը դրած, որ սուլթան Մահմուդ ուրիշ ելք չը գտնելով՝ ընկած էր Ռուսաստանի գիրկը, որ նրան փրկեց վերջնական անկումից, կռելով նրա հետ նշանաւոր «Հիւնքեար-իսքէլէսիի» դաշնադրութիւնը, այն՝ որի մասին վերջերս չատ խօսվեց իբր թէ այժմ էլ համանման պարագաների մէջ նորոգված է:

Մեր յօդուածը վերջացնում ենք մի ֆրանսիական մինիստրի խօսքերով, որ թէև արտասանված է մեզանից ճիշդ կէս դար առաջ, բայց որովհետև Թիւրքիան՝ այդքան ժամանակամիջոց անցնելուց յետոյ դարձեալ այն տեղն է կանգնած, որտեղ որ էր 50 տարի առաջ, ուստի այդ խօսքերը կատարելապէս արժէք ունեն նաև ներկայ վիճակի համար:

«Թիւրքիայում երկու կուսակցութիւն կայ, ասում էր Գիզօ, ֆրանսիական խորհրդարանի ամբիօնից, 1845-ին. նրանցից մէկը, որ խելացի է և չափաւոր, կարծում է թէ օսմանեան կայսրութիւնը կաղդուրելու, և նրա մէջ փոքր ի չատէ կարգ և պետական ոյժ հաստատելու համար, հարկաւոր է մեծ բարեկարգութիւններ մտցնել: Բայց այս կուսակցութեան կից՝ հին-Թիւրքը կուսակցութիւնը կայ, (իւլէմայով ուժեղացած), որ աշխատում է միշտ օսմանեան պետութեան հին, այսինքն սարսափեցնող, արիւնահեղ և նենգամիտ (astucient) քաղաքականութիւնը առաջ տանել: Այս երկու կուսակցութիւնների մէջ թէ Կ. Պոլսում և թէ գաւառներում խիստ պայքար տեղի ունի, որի դառնութիւնները աւելի գաւառներում են երևան գալիս, քան Կ. Պոլսում...»

Այսպէս էր խօսում մի ժամանակ ֆրանսիական մինիստրութիւնը...

Ակնատես

շէնքեր, որոնք բարեգործական նպատակների են յատկացված: Այս երկու վաքֆը կոչվում են վաքֆի-շերի (օրինական վաքֆ): Երրորդ դաս վաքֆը կազմում են այն կալուածները, որոնք մնում են նուիրատուների կարգադրութեան տակ, և այս վերջինները պարտաւորվում են վճարել միայն տարեկան որոշ գումար, իբրև տոկոս, բայց կալուածները համարվում են դարձեալ մզկիթների սեփականութիւն և չեն կարող ոչ ծախվել և ոչ գրաւ դրվել նուիրատուի պարտքի համար: Թիւրքաց օրէնքով, երբ մէկը մեռնում է առանց ուղղակի ժառանգ թողնելու, նրա ինչքն էլ դառնում է վաքֆ:

Թիւրքաց կառավարութիւնը 1875 թվին միայն կարողացաւ այդ ահագին կալուածների մի մասը աշխարհականացնել, որպէս զի պետութեան գանձարանը որ և է օգուտ կարողանայ քաղել դրանցից, որոշ հարկ առնելով: Բայց այժմեան դրութեան մէջ էլ մզկիթներն ահագին նիւթական կարողութիւն ունեն, որոնք իւլէմային թէ նիւթական և թէ բարոյական անկախ դիրք են տալիս. և ահա այս է միանգամայն պատճառը, որ նա այնքան ամուր և ապահով վիճակ ունի: Թիւրքիայում այդ զանազան մօլլաների, միւդերիսների, կամ առհասարակ հոգևորական դասի՝ տէրութիւնից ընդունած եկամուտը և ռոճիկը երկու անգամ աւելի է այն գումարից, որ գանձարանը ծախսում է ամբողջ երկրի ընդհանուր կրթութեան վրա: Քանի որ իւլէման այդպիսի կազմակերպութիւն ունի, բնական է, որ նրա հեղինակութիւնը ոչ թէ կը պակսի, այլ հետզհետէ կաւելանայ և կառաջացնէ այն դրութիւնը, որի պատկերը և հետևութիւնները յայտնապէս երևացին վերջերումս...

Իւլէմայի ձգտումն է եղած միշտ՝ ցոյց տալ, թէ ինքը կրօնի միակ պաշտպանն է երկրում և թէ առանց նրա անմիջական մասնակցութեան կատարված ամեն մի փոփոխութիւն՝ կասկածելի պէտք է նկատվի հաւատարիմ մուսուլմանի աչքում:

Այս է ահա մահմէտական կղերականութիւնը, որի ճնշումն այնքան զգալի է դարձած երկրի կանոնաւոր զարգացման ընթացքի վրա: Նա ներկայացնում է իրան իբրև ճշմարիտ հետևող ու մեկնող Ղուրանի: Բայց եթէ իւլէման ճշմարիտ գործադրողը լինէր իսլամական օրինագրքի, նա չէր մոռանայ, որ այնտեղ, Ղուրանի մէջ, ամենից աւելի բարձր դասված սկզբունքից մէկն էլ սա է, թէ՝ «մարդկանց լաւագոյնը նա է, որը ամենից չատ օգտակար կը լինի իր նմաններին»: Այս պարզ և առողջամիտ սկզբունքին՝ քանի՞ միւդերրիս է արդեօք հետևում, կամ քանիսը դրա հակառակ չէ գործում, թշնամացնելով մի և նոյն երկրում ապրող մարդկանց իրար հետ, կրօնի տարբերութեան պատճառով:

Ներկայ դարու սկիզբը, մի ուրիշ մահմէտական երկիր, որ անուանապէս միայն Թիւրքիային է պատկանում, այն է Եգիպտոսը, նոյնպէս իր բարենորոգումների դարաշրջին ունեցաւ, բայց այնտեղ նշանաւոր Մէհմէդ-Ալին չունեցաւ այն դժուարութիւնները, որին բաղխվում են չարունակ թիւրքական բարենորոգիչները՝ սկսած սուլթան Մահմուդից մինչև այսօր: Երբ Մահմուդ կռիւ էր մղում հին թիւրքերի և իւլէմայի, որ ասել է բուտինի և նախապաշարումների դէմ՝ իր բարենորոգչական ծրագիրներն առաջացնելու համար, Մէհմէդ Ալի արդէն կարողացել էր ճնշել իր հին արաբների և իր իւլէմայի դիմադրութիւնը, կազմակերպած էր բանակը նոր, եւրոպական ձևով և չնորհիւ այս նորոգութեան, այնքան ուժեղացած, որ պատերազմ բանալով իր սուլթանի դէմ, հետզհետէ տապալած, ջնջած էր նրա բանակները և վերջի վերջոյ նրան այնքան նեղը դրած, որ սուլթան Մահմուդ ուրիշ ելք չը գտնելով՝ ընկած էր Ռուսաստանի գիրկը, որ նրան փրկեց վերջնական անկումից, կռելով նրա հետ նշանաւոր «Հիւնքեար-իսքէլէսիի» դաշնադրութիւնը, այն՝ որի մասին վերջերս չատ խօսվեց իբր թէ այժմ էլ համանման պարագաների մէջ նորոգված է:

Մեր յօդուածը վերջացնում ենք մի ֆրանսիական մինիստրի խօսքերով, որ թէև արտասանված է մեզանից ճիշդ կէս դար առաջ, բայց որովհետև Թիւրքիան՝ այդքան ժամանակամիջոց անցնելուց յետոյ դարձեալ այն տեղն է կանգնած, որտեղ որ էր 50 տարի առաջ, ուստի այդ խօսքերը կատարելապէս արժէք ունեն նաև ներկայ վիճակի համար:

«Թիւրքիայում երկու կուսակցութիւն կայ, ասում էր Գիզօ, ֆրանսիական խորհրդարանի ամբիօնից, 1845-ին. նրանցից մէկը, որ խելացի է և չափաւոր, կարծում է թէ օսմանեան կայսրութիւնը կաղդուրելու, և նրա մէջ փոքր ի չատէ կարգ և պետական ոյժ հաստատելու համար, հարկաւոր է մեծ բարեկարգութիւններ մտցնել: Բայց այս կուսակցութեան կից՝ հին-Թիւրքը կուսակցութիւնը կայ, (իւլէմայով ուժեղացած), որ աշխատում է միշտ օսմանեան պետութեան հին, այսինքն սարսափեցնող, արիւնահեղ և նենգամիտ (astucient) քաղաքականութիւնը առաջ տանել: Այս երկու կուսակցութիւնների մէջ թէ Կ. Պոլսում և թէ գաւառներում խիստ պայքար տեղի ունի, որի դառնութիւնները աւելի գաւառներում են երևան գալիս, քան Կ. Պոլսում...»

Այսպէս էր խօսում մի ժամանակ ֆրանսիական մինիստրութիւնը...

Ակնատես

վարութեան համար մարդիկ է նշանակում նահանգական վարչութիւնը, որին զիմում են տեղատանալու նպատակով ամեն տեսակ մարդիկ, առանց բարձր ցենզի տեղ որոնողներ: Դրանցից շատերին տալիս են պրիստաւների պաշտօն, իսկ բանտերի հսկիչ նշանակում են երկրորդ և երրորդ տեսակի մարդկանց, որոնց չարագործութիւնները և կողմնապահ արարքները յաճախ հանդէս են եկել դատաստանի առաջ: Ցայտնի են դէպքեր, երբ բանտապետները առանձին բարեկամութիւն են եղել հաստատում բանտարկեալների հետ, նրանց հետ միասին զուարճանում, իսկ մնացած բանտարկեալները մնում էին ուրիշ վիճակի մէջ:

Բանտային վարչական բարւոքումը պէտք է ձգտի, որ պատիժը միայն զրկի մարդուն նրա անձնական ազատութիւնից և նպատակ ունենայ մարդուն ուղղել, իսկ նախնական բանտարկութիւնը ոչ մի պատիժ չը պարունակի իր մէջ, այլ միայն նպատակ այն բանին, որ յանցաւորը գտնվի արդարադատութեան ձեռքում, չը խուսափի դատարանից:

Այդտեղ ծագում է և մի ուրիշ շատ կարևոր խնդիր: Դա ոստիկանական տներին կից բանտարկութիւնն է, որ տեղի ունի կեանքի մէջ, ամեն օր, մեծ թւով: Ոստիկանական «կուտուզկաների» մէջ նստողներից շատերը երբէք դատարանի երեսը չեն տեսնում, և այնու ամենայնիւ բանտի մէջ նստում են: «Կուտուզկաների» պայմանները այնքան անբարեյաջող են, որ շատերը անհամբեր սպասում են այն օրին, երբ նրանց «կուտուզկաներից» կը տեղափոխեն իսկական բանտը: Իսկ ինչպէս յայտնի է, «կուտուզկաների» մէջ նստողները լինում են շատ անգամ անմեղ մարդիկ, թիւրիմացութեամբ բռնված մարդիկ: Եւ այդ տեսակ բանտարկվողների թիւը աւելի շատ է, քան մեծ յանցանք գործողների:

Այս բոլոր հարցերը պէտք է մտնեն բանտային օրէնսդրութեան մէջ և այդպէս պահեն ներկայ ռէֆորմը:

ԻՆՐՆՈՒՍ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐ

«Մշակի» 17-րդ համարի առաջնորդողը, որը վերաբերում էր մատնաւոր իրաւագէտներին, առիթ է տալիս մեզ մի քանի խօսք աւելացնել ժողովրդական ինքնուս փաստաբանների մասին:

Եթէ այդ դասակարգը իր ասպարէզը ընտրել է գաւառներում, այդ այն պատճառով է, որ այդտեղ ժողովուրդը դեռ ևս մնում է անգրագէտ, անուս: Գաւառներում ամեն մի ռուսերէն «խզբզանք» իմացող հռչակվում է «ադվակատ» և սկսում է հարստահարել գիւղական ռամիկ ամբոխը, որը չը նայած, որ քաջ ծանօթ է նոյն այդ «ադվակատների» ֆալսիֆիկացիային, դարձեալ ընկնում է ինքնուս իրաւաբանների ցանցը, մի կողմից իր տնտեսական գործերի բարդութիւնից ստիպված, իսկ միւս կողմից դատարանում խօսելու և իր գործերին ընթացք տալու համար լեզու չունենալու պատճառով:

Այդ ինքնուս փաստաբանները, որոնք հասարակ ժողովրդի արիւնն են ծծում, ոչ մի միջնակարգ ուսումնարան ոտք չեն կոխել. նրանք ոչ ուսման վկայական ունեն, ոչ ցենզային աստիճան և ոչ մասնագիտութիւն, այլ նրանց փաստաբանական ամբողջ գիտութիւնը կազմված է այն փորձերից, որ նրանք՝ անդադար մաչելով դատարանների չէֆերը՝ սերտել են դատաստանական պրակտիկայից և այդպիսով փաստաբան դարձել...

Շատ ցաւալի է այն երևոյթը, որ ժողովրդական այդ անկոչ իրաւագէտները, ի շահ իրանց գրպանի, յորդորում են գիւղական ժողովրդին նոյն իսկ մի որ և է աննշան գործի համար դատավարութիւն սկսել իր հակառակորդի հետ, նախապէս նրա գործի բարեյաջող լուծման մասին յոյս յայտնելով, և, ինչպէս ասում են, յաճախ լուն ուղղ են չինում՝ վէճեր և դատաստանական անվերջանալի խաղեր ստեղծելով ժողովրդի խաւերում... Բացի դրանից, այդ ինքնուս փաստաբանները իրանց «խզբզանքով» պաշտպանում են թէ բողոքողին և թէ պատասխանատուին, որ ասել է՝ իրանց մասնագիտութիւնը գործ են դնում երկու վիճող կողմերի համար ևս: Իսկ այդ դէպքում, դժուար չէ երևակայել, թէ որ կողմից աւելի շահ են ստանում՝ նրա գործն են առաջացնում...

Չը մոռանանք յիշել և այն, որ այդ ինքնակոչ հաւատարմատարները, իրանց անձնական շահերի տեսակէտից, դատաստանական գործերի վերաբերմամբ՝ շատ բան են ուսուցանում ռամիկներին, օրինակ, ուրացողութիւն, պարտաղանցութիւն, սուտ վկայութիւն և շատ անախորժութիւններ յարուցանում գաւառական ժողովրդի մէջ, միանգամայն խորտակելով գեղջկական կեանքի բարոյական հիմքերը, որոնք դարերի ընթացքում, առանց թղթի ու թանաքի՝ գոյութիւն ունէին մեր գաւառական աղգաբնակութեան շրջաններում...

Միթէ հարկաւոր է կրկնել, որ ինքնուս փաստաբաններից, իբրև ժողովրդական «տղրուկներից», մեր գաւառական ռամիկ ժողովրդին կարող են ազատել միմիայն բարեխիղճ մասնագէտ իրաւագէտները, որոնք գերադասելով ամբոխի բարոյական և տնտեսական շահերը՝ կը ջանան իրանց ծառայութիւնը մատուցանել այդ խեղճ ժողովրդին:

Գ. Ս.

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

«Հենրիխ Պեստալոցցի».—Վաչագան, Թիֆլիս, 1896.

Լոյս ընծայելով այդ աշխատութիւնը, աշխատասիրողը, ինչպէս յայտնում է առաջաբանի մէջ, նպատակ է ունեցել ուսումնասիրել երևելի մանկավարժի կեանքը, գործունէութիւնը: Սակայն նա, կարծէք դիտմամբ, ամեն ջանք գործ է դրել այդ նպատակին չը հասնելու համար, որովհետև գրուածքը ներկայացնում է Պեստալոցցիի մանկավարժական տաքերի և գործունէութեան մի անկապ, անմշակ, անսիստէմ բացատրութիւն: Աւելացրէք դրա վրա և լեզուի վերին աստիճանի անհարթութիւնը, մութ և անհասկանալի դարձուածները, և դուք կը ստանաք մի աշխատութիւն, որը հասկանալու համար պէտք է ամբողջ ժամերով մտածել, գլուխ կոտրել:

Ապացոյցների համար բերենք մի քանի նմուշներ: «Համբաւը նրա ապրուստը հայթայթելու գործունէութեան, նրա բազմանող հարստութեան մասին, նրա սպիտակացրած տները, նրա պերճ գոյքը, մինչև անգամ նրա մի քանի ուսուցիչների սոկրատական մեթոդն ու ժողովները ընթերցանութեան համար, որոնք կարդված են հասարակութեան ստորագոյն դասակարգերից, չը ձգեցին ինձ մոլորութեան մէջ:» (Երես 8): «Ով մարդ չէ ներքին զարգացած կարողութիւններով, ապա նրան պակասում են գրաւականներ, որոնք որոշելու էին նրա ամենամօտ նշանակութիւնը»: (Երես 10): «Որպէս բարոյական էակ, ես զգում եմ իմ մէջ զօրութիւն, որովհետև ես ունիմ գոյութիւն, բայց ունիմ գոյութիւն նրա համար, որ նա ունի գոյութիւն» (Երես 14): «Մատնակից էի անում նրան իմ հաղը» (Երես 7):

Մեզ թվում է, որ Վաչագանը պարզապէս թարգմանել է այդ գրուածքը մի որ և է ռուսերէն կամ գերմաներէն (գրքի մէջ ռուսաց կամ գերմանական բառեր շատ են բերված) ձեռնարկից և չնորք չէ ունեցել մինչև անգամ այնպէս թարգմանելու, որ կարդացողը մի բան հասկանայ, կամ չէ հասկացել ընագրի միտքը:

Սակայն այդ հանգամանքը բնաւ չէ արգելում մեր ինքնաբոյս մանկավարժին սպառնալ, որ նա պատրաստ ունի մանկավարժական գրուածների մի ամբողջ շարք և մտադիր է չուտով ի լոյս ընծայել, այն էլ այնպիսի լուրջ մանկավարժական նիւթերի մասին, ինչպէս 1) Ժան Ժակ Ռուսոյի կեանքը, 2) Ռուսոյի վարդապետութիւնները, 3) Ֆիլանտրոպինիստներ (?) և հիւմանիստներ 4) Պեստալոցցու նշանակութիւնը ժամանակակից մանկավարժութեան համար, և այլն, և այլն: Շնորհաւորում ենք այժմեանից հայ մանկավարժական գրականութիւնը, եթէ այդ գրուածներն էլ հրատարակված աշխատութեան նման կը լինեն... Բայց հեղինակը չէ բաւականանում միայն մանկավարժի փառք և անուն ստանալու. նա կամենում է հանդէս գալ և իբրև վիպասան, յայտնելով որ պատրաստ ունի մի վէպ «խորտակված սէր» անունով, և իբրև բանաստեղծ, գրած ունենալով «Ջախ ջախ քնար» վերնագրով բանաստեղծութիւններ և, կարծէք իր դավնեայ պսակի մէջ մի նոր ծաղիկ աւելացնելու նպատակով, նա որոշել է ասպարէզ դուրս գալ և իբրև պասկվիլանտ.—նա պատրաստել է տպագրութեան համար նաև հեռաւոր աշխատութիւնը. «Խորհրդաւոր վարդապետ (կեղծիք և գաղտնիք մի սուտ աղգասէր խաչագող հոգևորականի Բ. Թ., որի գծուծ կեանքը ու գործունէութիւնը շատ լաւ յայտնի է մանաւանդ Սալմասայի կողմերում)»: Ինչ գեղեցիկ պերսպէկտիվ—մանկավարժ, պատմաբան (ունի գրված նաև Հայաստանի պատմական անցեալի ու ներկայի մասին), վիպասան, բանաստեղծ, սամֆլէտիստ և պասկվիլանտ.—Նախանձելի փառքեր...

Ընթերցողներին կատարելապէս ապշեցնելու համար, մեզ մնում է միայն աւելացնել, որ այդ գրուածքը լոյս է ընծայվել, ինչպէս ասված է առաջաբանի մէջ, «մանկավարժ» Խահակ Ցարութիւնեանցի «բարեկամական խորհրդով», որին աշխատասիրողը «բախտ է ունեցել անձամբ ներկայանալու»:

Հ. Ա.

ՆԱՄԱԿ ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ

Փետրվարի 23-ին

«Արարատի» այս տարվայ յունվարի համարը այստեղ ստացվեց փետրվարի 20-ին. նրա հետ էր ուղարկված թէ անցեալ տարվայ «Արարատի» բովանդակութիւնը և թէ նրա վերջին համարի յաւելուած տախտակ օրացոյցը:

Թէպէտ Վիէննայում լոյս տեսնող «Հանդէսի» փետրվարի համարը ստացվեց փետրվարի 18-ին, ուրեմն «Արարատի» յունվարի համարից էլ շուտ, սակայն մեր ասելիքը ոչ դրան է վերաբերում և ոչ «Արարատի» ճառերին կամ կրօնաբարոյական քարոզներին: «Արարատի» նորակազմ վարչութիւնը իրան թոյլ է տուել մի այնպիսի սխալ, որի առաջ նսեմանում են նրա միւս պակասութիւնները:

«Գէորգեան ճեմարանը, գրում է այդ խմբագրութիւնը, (էջ 38—39), կրկին իր կոչման և ծրագրի սահմանումն ամփոփվեց և նորակազմ վարչութիւնն անկարգապահութեան արմատները հանելով, վերահաստատեց հոգևոր ճեմարանին վայել մի ընթացք:» Թէ ինչ կը նշանակէ «ամփոփվել կոչման ու ծրագրի սահմանում,» կամ «վերահաստատել հոգևոր ճեմարանին վայել մի ընթացք»—այդ հասկանալու համար պէտք է «աստուածաբանութեան և փիլիսոփայութեան պսակաւոր» լինել, որը բարեբաղդաբար չենք. բայց կարող ենք ասել թէ ինչ է նշանակում խօսքերը—«նորակազմ» վարչութիւնն անկարգապահութեան արմատները հանեց:—Այդ կը նշանակէ թէ հարիւրաւոր աշակերտներ վռնդեցին ձմեռվայ կիսին: Այս՝ արդարև փառաբանութեան արժանի քայլն է ահա, որ «Արարատի» նորակազմ վարչութիւնը համարձակութիւն չունի բացարձակօրէն ասելու: Բայց խնդրի միւս կողմը աւելի նշանաւոր է: Նա՝ այդ թշուառ վարչութիւնը մոռացել է, որ համարված անկարգապահութեան այդ արմատները ամենայն հայոց կաթողիկոսը և միանգամայն արդիւնաչատ թեմական ուսումնարանի հոգաբարձուները ընդունել են Ներսիսեան դպրոցում, որտեղից նրանց ձմեռվայ կիսին չեն հանում:

Արդ՝ մի հարց է ծագում, որի պատասխանը սպասում ենք «Արարատի» նորակազմ վարչութիւնից. ով եղաւ կարծված անկարգապահութեան արմատներն ընդգրկողը, կամ որն է անկարգապահութեան բոյսը ու նրան անունդ տուողը և ում հրամանով: Քաջութիւն ունեցէք պատասխանելու, ով աստուածաբաններ և փիլիսոփաներ, և ապահով եղէք, որ ձեր այո կամ ոչ պատասխանը մի անմեղ հետաքրքրութիւն յագեցնելու համար է միայն:

«Այդ չրջանը, շարունակում է «Արարատի» նորակազմ վարչութիւնը, ճեմարանի համար այնու նշանաւոր եղաւ, որ իր իսկ աշակերտներից պատրաստված մի նոր խումբ կուսակրօն գործիչներ վաստակեց:» Աշխատել և վաստակել՝ գովելի է:

Սակայն, երևում է դեռ կան աշխարհում ողորմելիներ, որոնք իրանց թշուառ աչքով կարող են միայն և միայն թշուառ տեսնել նաև հասարակութիւնը: Թող միանգամ ընդմիշտ հասկանան Էջմիածնի նորակազմ վարչութիւնները, որ հասարակութիւնը չատ բարձր է կանգնած ամեն տեսակ նորակազմ վարչութիւնից, որ նրա պահանջները տարբեր են, բազմակողմանի են, ժամանակակից են, որ «փոքրաւորների, մանկաւիկների, ձեռնպսակների» յայտնի ծառայութիւնը, այլ և աստուածաբանների ու փիլիսոփաների բազմագիտութիւնն ու խորիմաստութիւնը բոլորովին անկարող և անպէտք են հասարակութեան ծառայելու, նրա պահանջները լրացնելու. վերջապէս որ ծիսապաշտ կղերականութեան չկոլան չէ, որին կարօտում է հասարակութիւնը, այլ գործունեայ և զարգացած քահանաներն ու եկեղեցականներն են, որոնց հասարակութիւնը սպասում է տղէտ, սրբութիւնը վաճառող քահանաներից ազատվելու համար:

Նախ ճանաչիր քեզ և հասարակութիւնը և ապա փորձիր նրա համար գործիչ դառնալ, նրա վէրքերը բուժել,—այս է մեր խորհուրդը, որ այս նկատողութեան վերջին կարող ենք տալ թէ մեր աստուածաբաններին ու փիլիսոփաներին, և թէ զանազան փոքրաւորներին ու մանկաւիկներին:

Գ.

ՆԱՄԱԿ ԹՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, մարտի 5-ին

Թոյլ տուէք ինձ արձանագրել հետեւեալ փաստը՝ իբրև մի նմուշ մեր «գրական բարքերից»:

Այսօր 3-ին ես ներկայ էի Բարեգործական ընկերութեան ընդհանուր ժողովին: Երբ առաջին հարցի քուէարկութիւնից յետոյ նախագահը կարճ ընդմիջում յայտարարեց, և ես դուրս եկայ դուռայի կօրրիդօրը, ուր բազմաթիւ մարդիկ կային, յանկարծ ինձ մօտեցաւ մի պարոն, անունը Շիրվանզադէ, և առանց որ և է նախաբանի դիմեց ինձ հետեւեալ խօսքերով. «Ես թարգմանել եմ մի գիրք. դուք գրել էք թէ վատ է այդ թարգմանութեան ոճը, լեզուն: Մինչև այժմ հայոց գրականութեան մէջ դեռ ոչ ոք չէ կարողացե գրել իմ լեզուի և ոճի դէմ. ով էք դուք»:

Այսքանը:

Ընթերցողը գուցէ կը հասկանայ այդ խօսքերը, եթէ նկատի ունենայ, որ «Մշակի» մէջ տպագրվում են մատենագրական փոքրիկ ակնարկներ՝ Լ. ստորագրութեամբ: Այդ ակնարկներից է վրդովվել Շիրվանզադէն: Սակայն որն է նրա թարգմանութիւնը: «Մշակի» խմբագրութեան մէջ վերջին երեք-չորս ամիսները ստացված գրքերից և ոչ մէկը չէ զարդարված Շիրվանզադէի անունով և «Մշակի» մատենագրական ոչ մի յօդուածի մէջ չէ յիշատակված թէ այս ինչ գիրքը Շիրվանզադէի գրածն է կամ թարգմանածը: Հէնց սա է փաստը, որ ցոյց է տալիս թէ ինչ բարքերի մէջ ենք ապրում: Քաջութիւն չունենալ անուն դնել գրքի վրա, այդ բաւական չէ—քաջութիւն չունենալ տպագրական խօսքով հերքել մամուլի մէջ տպածը, այլ, ընդհակառակն, հասարակական չինութիւնների կօրրիդօրներում դիմել այնպիսի միջոցների, որոնք անվայել են ամեն մի օրինաւոր մարդու համար,—ահա թէ ինչ տեղ կարող է հասցնել նոյն իսկ գրական մարդուն հիւանդոտ մեծամտութիւնը...

Մի ուրիշը իմ տեղ գուցէ այլ կերպով պատասխանէր մեծամտութեան մէջ տառապող պարոնին: Բայց ես գիտէի որ իմ առջև կանգնածը նոյն Շիրվանզադէն է, որ ոչ միայն «ով էք դուք» խօսքերը, այլ և դրանցից աւելի վատերն էլ մի քանի անգամ յանդգնութիւն է ունեցել ասել նոյն իսկ հանգուցեալ Գրիգոր Արծրունուն, իսկ ինչ եմ ես Արծրունու հետ համեմատած:

Մի բան է միայն մնում պակաս. որ վաղը կամ միւս օրը նոյն Շիրվանզադէն սկսի յօդուածներ գրել գրական ազնիւ բարքերի, մամուլի նշանակութեան, կարծիքների ազատութեան և կրիտիկայի անկախութեան մասին: Եւ այն ժամանակ համարձակ կարելի է ասել. «Ամենայն ինչ կատարեալ է»:

Լէօ

ՆԱՄԱԿ ԹՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, մարտի 8-ին

Խնդարհաբար խնդրում եմ հաճիք թոյլ տալ «Մշակի» միջոցով յայտնելու, որ այսօր, քաղաքային պօստով, մի պատուիրած նամակ ուղարկեցի «Արձագանքի» խմբագրութեանը՝ թէ Կովկասի հայոց Բարեգործական ընկերութեան վերջին ընդհանուր ժողովի և թէ յատկապէս իմ մասին՝ «Արձագանքում» աղճատված, յեղաշրջված, գոնաւորված կերպով հրատարակած քանի մի յօդուածների առիթով, խնդրելով խմբագրութիւնից՝ կամ անփոփոխ հրատարակել իմ պատասխանը և կամ օրինաւոր եղանակով յայտ դարձնել:

Այս փոքրիկ ծանուցումը կարևոր եմ համարում անել «Մշակի» մէջ նախ՝ այն պատճառով, որ ընկերութեան ժողովի առիթով բանակռիւ է ծագել լրագիրների մէջ, հետևապէս հետաքրքրվող ընթերցողներն օր առաջ սպասում են լսել այդ խնդրի վերաբերմամբ բուն ճշմարտութիւնը՝ և երկրորդ՝ որ «Արձագանքը» այս անգամ ևս չը ծածկի իմ պատասխանը, ինչպէս ծածկել, չէ հրատարակել և մինչև անգամ չէ վերադարձրել իմ նոյն իսկ պաշտօնական մի քանի հերքումները։

Մեսրոպ քահանայ Մելեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

«Մշակի» այսօրվայ համարը բաղկացած է թերթ ու կէսից։

—

Փետրվարի 27-ին, Պետերբուրգում, Զմերային պալատում կայացաւ ռուսաց Կայսերական պատմական ընկերութեան տարեկան հանդիսաւոր նիստը՝ Նորին Մեծութիւն Թագաւոր Կայսրի նախագահութեամբ և ընկերութեան բազմաթիւ անդամների մասնակցութեամբ։ Ինչպէս երևում է ընկերութեան նախագահ Պոլովցէվի ժողովին ներկայացրած տեղեկագրից, 1894 և 1895 թուերի ընթացքում ընկերութիւնը հրատարակել է իր «Ժողովածուի» 90—97-րդ հատորները։ Դրանց մէջ նշանաւոր է մանաւանդ 95-րդ հատորը, որ պարունակում է Մոսկվայի թագաւորութեան ունեցած դրագրութիւնները նոգայների, Կրիմի և Թիւրքիայի հետ՝ Վասիլի III թագաւորի ժամանակ։ Այդ նիստում կարդացված բէֆերատներից աչքի է ընկնում պրոֆէսոր Մարտէնսի կարդացած յօդուածը՝ Նիկոլայ I Կայսրի Թիւրքիայի վերաբերմամբ գործ դրած քաղաքականութեան մասին։

—

Այսօր, մարտի 9-ին, գարնանամուտին, պարսիկները տօնում են «Նավրուզ» ազգային մեծ տօնը։ Պարսկաստանում այդ տօնը չարունակվում է ամբողջ 40 օր, իսկ մեր երկրում պարսիկները և թուրքերը տօնում են միայն 3 օր։ Նավրուզին բոլոր պարսիկները միմեանց ընծաներ են տալիս։ Թիֆլիսի պարսից հիւպատոսի բացակայութեան պատճառով, հիւպատոսարանում պաշտօնական ընդունելութիւն չէ լինելու։

—

Մտադրութիւն կայ հիմնել Թիֆլիսում «Վրաց բարեգործական ընկերութիւն», որի կանոնադրութիւնը, ինչպէս հաղորդում են տեղական լրագիրները, արդէն կազմված և ներկայացված է կառավարութեան հաստատութեան։ Մեզ համար շատ ուրախալի կը լինի, եթէ վրաց հասարակութեան այդ մտադրութիւնը իրագործվի։

—

Լսում ենք, որ Թիֆլիսի հայոց Հրատարակչական ընկերութեան տարեկան նիստը նշանակված է կիրակի, մարտի 17-ին։

—

Վաղը, կիրակի, մարտի 10-ին, Վանքի մայր եկեղեցու բակում տեղի կունենայ Թիֆլիսի նախկին քաղաքագլուխ հանգուցեալ Պողոս Իզմայլովի մահարձանի բացումը։ Պատարագից յետոյ կը կատարվի հոգեհանգիստ հանգուցեալի յիշատակին, իսկ յետոյ մահարձանի բացումը, որին ներկայ կը լինի Թիֆլիսի դուման իր ամբողջ կազմութեամբ։

—

Թիֆլիսի դուման իր վերջին նիստում որոշեց, ի յիշատակ թագադրութեան, Թիֆլիսում բանալ քաղաքային հասարակաց գրադարան-ընթերցարան։ Այդ ընթերցարանի վրա տարեկան պէտք է ծախսվի 4,000 ռուբլի։ Ընթերցարանի կանոնադրութիւնը մշակելու համար կազմված է մի առանձին յանձնաժողով։ Դումայի այդ որոշումը արժանի է ամենայն համակրութեան, որովհետև Թիֆլիսի «հասարակական» կոչված գրատունը իր պայմաններով և ներկայ վիճակով միանգամայն չէ կարողանում գոհացում տալ քաղաքի ազգաբնակչութեան մտաւոր պահանջներին։

—

Պաշտօնապէս հրատարակվել է պետական խորհրդի Բարձրագոյն հաստատված մի նոր օրէնսդրութիւն՝ ուսուցչական ցեղնդ ձեռք բերելու մասին։ Այդ օրէնսդրութեան հիման վրա, այն անձինք, որոնք կամենում են սկզբնական դպրոցների մէջ ուսուցչութիւն անելու իրաւունք ձեռք բերել, կարող են քննութիւն տալ գաւառական դպրոցի (уѣздное училище) դասընթացի ծաւալով հետևեալ տեղերում. նահանգական քաղաքներում—պետական ուսուցչական սեմինարիաներում և գիմնազիաներում, իսկ գաւառական քաղաքներում, որտեղ չը կան գիմնազիաներ, ըէալական դպրոցներ և ուսուցչական սեմինարիաներ,—1872 թուի կանոնադրութեամբ սահմանված գաւառական և քաղաքային դպրոցներում, բացի միդասարանեան դպրոցներից։

—

Երկրագործութեան մինիստրութիւնը այժմ մշակում է մի ընդհանուր ծրագիր օրինակելի դաշտեր և փորձնական կայարաններ բանալու համար։

—

Ամսիս 2-ին, շաբաթ օր, կովկասեան զինուորական կօրպուսի շտաբի չինութեան մէջ՝ Կարսի ամրոցի շտաբի գլխաւոր գնդապետ Կարցէվը կարդաց մի զինուորական զեկուցում քիւրդերի մասին։ Ինչպէս հաղորդում է «Кавказъ» լրագիրը, դասախօսութեան ծրագիրը հետևեալն էր.—քիւրդերի աշխարհագրական տարածումը, ցեղի թիւը, քիւրդերի կրօնը, լեզուն և պատմութիւնը. քիւրդերի բաժանումը զանազան ցեղերի. նստաբնակ քիւրդերը, թափառական և նստաբնակ քիւրդերի կենցաղը, Քիւրդստանի այժմեան վիճակը, քիւրդերի յարաբերութիւնները թիւրքաց և պարսից կառավարութիւնների և տեղական քրիստոնեաների հետ, Համիդիէ հեծելազօրքի կազմակերպութիւնը, ռուսաց իշխանութեան նախկին յարաբերութիւնները քիւրդերի հետ և ներկայումս քիւրդերի հետ յարաբերութիւն ունենալու հնարաւորութիւնը։ Ցանկալի էր, որ այդպիսի մի հետաքրքրական զեկուցում տպագրութեամբ լոյս ընծայվէր, որպէս զի շատերը կարողանային ծանօթանալ նրա բովանդակութեան հետ։

—

Թիֆլիսում կազմվել է մի ժամանակաւոր կոմիտէ, որ պէտք է ընդունի զրամական նուէրներ՝ Բութայիսի նահանգում և Գօրու գաւառում հեղեղից և ձիւնակոյտերից վնասված ազգաբնակութեան օգնութիւն հասցնելու համար։ Նուէրները կարելի է ուղարկել կոմիտէի նախագահ իշխանուհի Բագրատիօն-Մուխրանսկուն։ Մենք տարակոյս չունենք, որ Թիֆլիսի հայ հասարակութիւնն էլ կը մասնակցի իր նուէրներով այդ մարդասիրական և համակրելի գործին։ Ինչպէս հաղորդում են տեղական լրագիրները, հէնց կոմիտէի բացման օրը բաւական նշանաւոր նուէրներ են եղել. այսպէս, օրինակ, բարոն Նիկոլայ նուիրել է 500 ռուբլի։

—

Ցիշեցնում ենք ծնողներին, որ վաղը, մարտի 10-ին, կիրակի, ժամը 12-ին, կրուժոկի դահլիճում կայանալու է Վ. Լունկէվիչի դասախօսութիւնը երեխաների և աշակերտների համար։ Այս անգամ դասախօսը պէտք է կարդայ «Երկնքի» մասին և, անկասկած, նոյնչափ հետաքրքրական կը լինի, որչափ առաջին դասախօսութիւնն էր։

—

Մեր նաւթագործները նոր մրցակիցներ պէտք է ունենան այնտեղ, ուր չէին կարող ենթադրել։ Պետրօկովի նահանգի կալուածատէրերի մի խումբ հիմնում է խոշոր գործարան նաւթ ստանալու տօրֆից, որ մեծ քանակութեամբ կայ այն տեղերում։ Արտասահմանում շատ աջող փորձեր են արված այդ ուղղութեամբ։ Գերմանիայում տօրֆից ստացած նաւթը յետ է մղում ամերիկականը, որովհետև նա իր յատկութեամբ բարձր է ամերիկականից։

—

Ռուսաց տնայնագործութեան արդիւնքները, ինչպէս յայտնի է, ուղարկված էին Չիկագօի ցուցահանդէսը։ Ամերիկացիները հաւանեցին այդ առարկաները և այժմ մեծ քանակութեամբ պահանջում են Ռուսաստանից տնայնագործական ապրանք։ Պերմի տնայնագործական բանկը որոշել է բանալ մի դրասենեակ Նիւ-Յորկում և կանոնաւորել այդ նոր առևտուրը։

—

Աղնւականների թատրոնում, վաղը, մարտի 10-ին, հայոց դերասանական խումբը ներկայացնելու է մի նոր պիէս՝ Շպաժինսկու «Գաղտնի ոյժ» դրաման։ Այդ ներկայացմանը մասնակցում է երիտասարդ դերասան Օհանեան, որի առաջին դերիւն է դա։ Շատ ուրախ կը լինենք, եթէ երիտասարդ դերիւտանտը աջողութիւն ունենայ, որովհետև մեր բեմը, կրկնում ենք, ոչինչ բանի այնքան կարօտութիւն չունի, որքան նոր ոյժերի։

—

ՄՈՍԿՎԱՅԻՑ մեզ գրում են փետրվարի 28-ից. «Անցեալ օրը «Охотничій клубъ»-ի դահլիճում մեր երգիչ Շահլամեանը տուաց մի կօնցէրտ։ Կօնցէրտը շատ լաւ անցաւ։ Հիանալի էր երաժշտական խմբի կատարած արևելեան մօտիվներից կազմված մի պիէս, որը հասարակութեան ցանկութեամբ երկու անգամ կրկնվեց. շատ լաւ տպաւորութիւն թողեց և չնորհալի երգչուհի Զասլան իր իտալերէն երգելով։ Գլխաւոր ուշադրութիւնը, ի հարկէ, դարձրած էր Շահլամեանի վրա և, պէտք է ասել, որ չնորհալի երգիչը արդարացրեց հասարակութեան յոյսերը։ Բուռն ծափահարութիւններով և երկու թանգագին ընծաներով հանդիսականները վարձատրեցին երգչին այն գեղեցիկ էսթէտիական բօղէների համար, որ նա պատճառեց իր երգերով, ինչպէս օրինակ, Մերկադանտէի բէչիտատիւը, «Cavaleria rusticana»-ից երգած կտորը, որը երկու անգամ կրկնեց և վերջապէս մի երկու, երեք ռուսերէն և հայերէն երգեր, որոնցից «Հազար երանի», «Կռունկ» և «Ցայն տուր, ով ծովակ» երգերը աննման էին»։

—

ՎԵՐԻՆ-ԱԳՈՒԼԻՍԻՑ մեզ գրում են. «Մի քանի օր առաջ Մարուանիս գիւղն են գալիս մի քանի թուրք կլայեկոզներ, որոնցից երեքը, ինչպէս յայտնվեց, ծպտեալ աւազակներ են լինում։ Գիւղացիք դրանց ճանաչում են իբրև Նաբիի խմբում մասնակցողների, ուստի չուտով յայտնում են տանուտէրին, որը ձերբակալելով, ուղարկում է նրանց Օրդուբաթ։ Այժմ երկուսը քանտարկված են, իսկ մէկը երաշխաւորութեամբ արձակված է։ Նրանք երեքն էլ պարսկաստանցի են»։

—

ՇԱՄԱԽՈՒՑ, գործակալ Տ. քահանայ Մարաղանց խնդրում է մեզ տպագրել հետևեալը. «Մշակի» 11-րդ համարում Շամախուց գրած մի թղթակցութիւն, խօսելով քաղաքիս հոգաբարձական և երեսփոխանական ընտրութիւնների մասին՝ ի միջի այլոց ասում է. «Դիցուք՝ հոգաբարձական կամ երեսփոխանական ընտրութիւն է լինելու. այդ մասին վաղօրօք ոչ յայտարարութիւն կը լինի և ոչ ծանուցում»։ Ես, իբրև քաղաքի գործակալ, պատիւ ունեմ յայտնելու, որ ոչ մի ընտրութիւն չէ կայացել և չէ կարող կայանալ առանց նախապէս ծանուցման։ Անցեալ տարի, երբ քաղաքիս հայոց դպրոցների համար հրամայված էր ինձ հոգաբարձական ընտրութիւն կայացնել, երկու շաբաթ առաջ եկեղեցում ծանուցանելուց յետոյ՝ մինչև անգամ ծանուցագիրներն էլ ուղարկեցի, որ բացակայ ծխականներն ևս իմանան, որ այս ինչ օրը ընտրութիւն է նշանակված։ Այս տարի ինձ հրամայված էր (կոնսիստորիայից) երեսփոխանական ընտրութիւն կայացնել և ես մէկ շաբաթ առաջ եկեղեցում ծանուցանելուց յետոյ, անհրաժեշտ համարեցի ծանուցագրեր ևս ուղարկել ծխականներին»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Մեզ գրում են Կ. Պոլսից, փետրվարի 27-ից. «Կ. Պոլսոյ ֆրանսիական դեսպանը 1000 ֆրանսիական ոսկի կը ղրկէ Զէյթուն, հիւպատոսներուն ձեռքով հայերուն բաժնուելու համար։ Այդ գումարին 10,000 ֆրանքը նուիրած է հանրապետութեան նախագահ պ. Ֆոռ, իսկ մնացածը հայթայթուած է Իւնիոն Տէղէքօլ ընկերութեան Հայաստանին թշուառներուն համար ղրկած 60,000 ֆրանքէն։ Նպաստները Զէյթունի մէջ բաժնուելէն ետքը, 9 զէյթունցի կը պատրաստուին Ալպիսթան երթալ ուսելիք գտնելու. հիւպատոսները կապահովեն անոնց կեանքը. կառավարութիւնն ալ հիւպատոսներուն առաջարկին վրա քանի մը ոստիկան կընկերացնէ հետերնին։

—

Կ. Պոլսից գրում են «Daily News» լրագրին. «Օսմանեան կառավարութեան, ինչպէս և դիպլոմատիական շրջանների լուրջ հոգացողութեան առարկայ է դարձել այն հարցը, թէ ինչ անել այն բանի դէմ, որ հաղարաւոր քրիստոնեաներ բռնի կերպով իսլամացնվում են։ Սուլթանը և Բ. Դուռը զայրացած են այդ բանի դէմ և ընդունում են, որ կարելի է թոյլ տալ իսլամացումը, միայն այն դէպքում, երբ համոզմունքով է, և այդ մտքով նրանք հրահանգներ ուղարկեցին գաւառական իշխանութիւններին։ Բայց իշխանութիւնները հնարաւորութիւն չունեն հսկել նոյն իսկ մշտաբնակ մահմեդական աղգաբնակութեան վրա, որը տոգորված է կրօնական ֆանատիկոսութեամբ, ուր մնաց թափառական քիւրդերի վրա, որոնք սարսափի և երկիւղի տակ են պահում Փոքր-Ասիայի նահանգների քրիստոնեայ աղգաբնակութիւնը։ Անգլիական և ռուսաց դեսպանները բազմակողմանի կերպով քննում են այդ հարցը, որի լուծումը անհրաժեշտ է մտքերը հանդարտեցնելու համար։»

—

Ռէյտէրի գործակալութիւնը հաղորդում է, որ ոստիկանութեան մինիստրը Կ. Պոլսում ստացել է այժմ Եգիպտոսում գտնվող էմիգրանտ Մուրադ բէյից մի հեռագիր, որով նա յայտնում է, թէ գնում է Եւրոպա՝ ի նկատի ունենալով, որ կարիք են եկել մի քանի անձինք իրան սպանելու դիտաւորութեամբ։

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Թաւրիզ, փետրվարի 24-ին

Երէկ, ամսիս 23-ին, Արամեան ուսումնարանի սրահում տեղի ունեցաւ բազմամարդ մի ժողով. ներկայ էին հասարակութեան ամեն խաւերից մարդիկ։ Ժողովը կազմվել էր հայր փոխանորդի հրաւիրագրերով։ Բանալով ժողովը, փոխանորդը առաջարկում է կազմել մի ընկերութիւն, որն իր վրա առնէ ինչպէս այստեղի, այնպէս և գարնանը սպասվող բազմաթիւ անպաշտպան հայերի խնամքը, մի բան, որը մինչև օրս առաջնորդարանի վրա է ծանրացած եղել։ Ապա արդարացնելով հասարակութեան տրտունջը՝ այստեղ արդէն գոյութիւն ունեցող ընկերութիւնների դէմ այն պատճառով, որ նրանք հաշիւ չեն ներկայացնում, փոխանորդն առաջարկեց, որ նոր կազմվելիք ընկերութեան վրա կոնտրոլ անի երկթաղի հոգաբարձութիւնը։

Մեր կարծիքով, վերջին կէտը միանգամայն ուելորդ և անտեղի էր, որովհետև իւրաքանչիւր ընկերութիւն, որն ունի իր վարչութիւնը, ինքը հսկող մարմին է հանդիսանում այդ վարչութեան վրա և քննում է նրա հաշիւներն ու նախահաշիւները իր ընդհանուր և խառն ժողովներում, ուր հասարակութեան ամեն մի անդամը ներկայ կարող է լինել։ Ինչ կարիք կայ, ուրեմն, մի մարմին, որը նոյնպէս պարտական է միշտ հաշիւ տալ հասարակութեանը, նշանակել վերահսկող մի այլ ընկերութեան վրա, որը նոյնքան վստահելի է, որքան և առաջինը։

Սարաճեան վարդապետից յետոյ ժողովականներից մէկը առաջարկեց կազմել ամբողջ պարսկահայոց բարեգործական ընկերութիւն, որն ինքն ըստ ինքեան իր վրա կառնէ ինչպէս աղքատների խնամքը, այնպէս էլ հասարակական զանազան կարիքների հոգատարութիւնը։ Խնդիրը հասունացած խնդիր է։ Այդ առիթով բաւական ժամանակ խօսվում էր հասարակութեան զանազան խաւերում։ Թէպէտ եղան մարդիկ, որոնք անժամանակ և անիրագործելի էին համարում այդ բանը, կարծելով թէ դրա համար հէնց սկզբից 100,000-ներ են հարկաւոր, բայց երբ երկու առաջարկութիւններն էլ քուէի դրվեցան, ձայների առաւելութեամբ ընդունվեց հիմնել՝ ամբողջ պարսկահայոց Բարեգործական ընկերութիւն։ Անմիջապէս 6 հոգուց մի մասնաժողով կազմվեց, 14 օրում կազմելու և խառն ժողովին ներկայացնելու ընկերութեան ծրագիրը։ Որքան կարողացանք իմանալ, այս նպատակով բաւական ժամանակից ի վեր մօտ 10,000 ռուբլի փող կայ, որն այժմ գտնվում է մի քանի վաճառականների մօտ։ Անշուշտ այդ գումարն ընկերութեան մայր գումարը կը կազմի։

Շնորհաւորելով պարսկահայերին այս յաջող քայլը, հրաւիրում ենք պարսկահայոց միւս քաղաքներին ևս՝ ձեռք մեկնել Թաւրիզին։ Պարսկաստանի համարեա բոլոր քաղաքներում կան այս կամ այն բարեգործական նպատակով հիմնված ընկերութիւններ. անհրաժեշտ է այդ ընկերութիւնների կենտրոնական ընկերութեան հետ միանալը՝ նրա հիմքն աւելի ամուր և գործունէութիւնն աւելի ընդարձակ դարձնելու համար։

Արտաւազդ

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՔՐԻՍՏՈՆԵԱՆՆԵՐԸ

—

Անգլիական Daily News› լրագրի մէջ գտնում ենք հետեւեալ թղթակցութիւնը, որ պարունակում է իր մէջ մի անաչառ տեսութիւն Պարսկաստանում ապրող քրիստոնեաների ներկայ վիճակի մասին.

«Պարսկաստանը մահմէտական մի երկիր է, որի մէջ ոչ-մահմէտականները կազմում են ամբողջ ազգաբնակութեան հազիւ մի քսաներորդ մասը: Պետական կրօնը, որ դաւանում է ժողովրդի $^{11}/_{14}$ մասը, չիա աղանդն է: Իր բնաւորութեամբ և արտայայտութեամբ այդ աղանդը աւելի կղզիացնող և մոլեռանդ է, քան սիւննի աղանդը: Քրիստոնէական համայնքը բաղկացած է երկու տարրից՝ հայկական և քաղդէա-այսօրական՝ ընդհանուր թւով մօտ 130 հազար հոգի: Քրիստոնեաները բնակվում են Ադրբէյջան և Արաղ նահանգներում, քիչ թւով պատահում են և պետութեան ուրիշ կողմերում:

«Արաղի նահանգում հայերի թիւը մօտ 40,000 է: Նրանց բնակութեան գլխաւոր կենտրոններն են Թէհրան, Ջուլայ (Սպահանի մօտ), Ռաշտ և մեծ թւով Սպահանի արեւելեան և հիւսիս-արեւելեան գիւղերում: Այս վերջին տեղերում հայերի հարեւանները կազմում են լօր ցեղը, որը Պարսկաստանի ամենավայրենի և օրինազանց հպատակներից մէկն է:

«Ադրբէյջանում հայերի թիւը 40,000-ից աւելի է: Նրանք ապրում են գլխաւոր քաղաքներում և կազմում են գիւղեր Ուրմիայի, Սուլդուզի և աւելի մեծ թւով Սալմաստի և Ղարադաղի գաւառներում:

«Այսօրինների թիւը հազիւ է հասնում 50 հազարի: Նրանք ապրում են Սալմաստի, Ուրմիայի, Սիւննէյի և Սակիզի գաւառներում, կազմելով ամբողջ գիւղեր: Այդ ժողովուրդը պատկանում է նեստորական աղանդին, սակայն վերջին տարիներում նրա մի պատկառելի մասը ընկնում է կաթոլիկ և բողոքական եկեղեցու գիրկը:

«Ադրբէյջանի քրիստոնեաների հարեւաններն են պարսիկներ, թիւրքեր և քիւրդեր: Այս վերջինները նման են վերև յիշած լօր ցեղին: Այդ տարրերը պակաս վտանգաւոր չեն քրիստոնեաների ապահովութեան համար, քան թէ թիւրքիայում գտնվող ոչ-քրիստոնեայ ցեղերը: Սակայն ներկայ բօսէում Պարսկաստանում հանգստութիւն է տիրում:

«Ղաջար թագաւորները, որ հաստատված են Պարսկաստանում, միշտ աշխատել են ոչ մի տարբերութիւն չը դնել իրանց մահմէտական և ոչ-մահմէտական հպատակների մէջ: Քրիստոնեաներ, զրադաշտականներ, հրէաներ և ուրիշ ոչ-մահմէտական և կիսամահմէտական համայնքներ վայելում են թագաւորական տան հովանաւորութիւնը և կարող են ազատ դաւանել իրանց կրօնը: Շահը երբէք չէ միջամտել այդ համայնքների կրթական գործի մէջ, տալով ազատութիւն իւրաքանչիւր համայնքին կարգադրելու իր դպրոցների կազմակերպութեան և կառավարութեան գործը, և մինչև անգամ խրախուսել է իր կողմից կրթութեան հիմնարկութիւնը, չնորհելով նուէրներ և ուրիշ դիւրութիւններ:

«Արդարադատութիւնը կատարվում է Շէրիի և Օրֆիի ցուցմունքների համաձայն: Օրֆին կազմված է աւանդութեան և եղած զէպքերի հիմունքների վրա, իսկ Շէրին հիւսված է Ղուրանի յօդուածներից և նրա մեկնութիւններից: Քրիստոնեաները ազատ կերպով կարող են ընտրել դատաստանի թէ այդ երկու ձեը և թէ դիմել իրանց հոգևոր պետերին և նրանց միջոցով վերջացնել իրանց դատական գործերը:

«Երբ անցեալ տարի ասիական Թիւրքիայում տեղի ունեցան ամենին յայտնի սարսափները, Պարսկաստանի ազգաբնակութիւնը սկսեց լուրեր առնել սահմանի միւս կողմից և բնականաբար լարվեց: Կառավարութիւնը վախենալով, որ մի գուցէ խառնակութիւններ ծագեն և իր երկրում, խիստ հրամաններ ուղարկեց Ադրբէյջանի կառավարիչներին ամենաաստիճ կերպով պատուիրելով, որ ոչ մի շարժում թոյլ չը տան իր երկրի մէջ: Եւ այդ կարգադրութեան հետևանքն այն եղաւ, որ ոչ մի թիւրիմացութիւն չը ծագեց Պարսկաստանում, և այս ծանր ժամանակում քրիստոնեաները մնացին ազատ որ և է յարձակումից:

ԱՇԽԱՏԱՒՈՐՆԵՐԻ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐ

—

Անգլիական համայնքների ժողովը այս օրերս ընդունեց մի օրինագիծ, որի նպատակն է դիւրացնել աշխատող դասակարգի համար սեփական բնակարաններ ձեռք բերելը: Այդ օրինագծով քաղաքային և գաւառական վարչութիւնները պէտք է փոխառութեամբ օգնեն աշխատող մարդկանց՝ գնելու այն բնակարանները, ուր նրանք ապրում են, կամ մտադիր են ապրելու: Փոխառութիւնը պէտք է բնակարանի արժէքի $^{3}/_{4}$-ից աւելի չը լինի և յամենայն դէպս պակաս քան 150 ֆունտ ստերլինգ մի ընտանիքի վրա: Պարտքը պէտք է չիջուցվի 30 տարվայ ընթացքում:

Այդ օրինագծի դէմ խօսողները կասկած էին յայտնում, որ մի գուցէ օրինագիծը չունենայ այն հետևանքները, ինչ նրանից սպասում են. սակայն օրինագծի պաշտպանները ապացուցանում էին, որ ոչ մի վնաս չէ կարող լինել, եթէ մանր սեփականատէրերի թիւը աւելանայ երկրի մէջ: Զարլզ Դիլկ առաջարկեց, որ տունը գնեն ոչ առանձին մարդիկ, այլ հասարակական հիմնարկութիւնները և յետոյ տան աշխատողներին: Ջոն Բէօրնս պնդում էր, որ այդ օրինագծից կօգտվեն միայն մի քանի ունևոր աշխատողներ, իսկ աղքատները կը մնան նախկին վիճակի մէջ. մանաւանդ որ մշտական մի տեղում ապրող մշակների թիւը շատ սահմանափակ է, այլ նրանք տեղից տեղ են փոխվում:

Սակայն այդ բոլոր առարկութիւնները հերքվեցին կառավարական ներկայացուցիչ Զալլինի կողմից, և օրինագիծը ընդունվեց ձայների մեծ առաւելութեամբ:

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՀՌՕՄ, 6 մարտի: Պատգամաւորների ժողովում Ռուդինի կարդաց մի յայտարարութիւն, որի մէջ վստահութիւն է յայտնվում թշուառ, բայց քաջ զօրքին, որին կուի դաշտը տարան, առանց որ և է պատրաստութեան: Մինիստրութիւնը Իտալիայի կալուածները ընդարձակելու քաղաքականութեան կողմնակից չէ և չէ ցանկանում Տիգրէ տիրապետել: Եթէ հանգամանքների բերմամբ կը ստիպվենք խաղաղութեան դաշն կապել, Աբիսինիան Իտալիայի հովանաւորութեան տակ դնելը չը պէտք է լինի դաշնագրի վերջնական պայմանը: Ռուդինի պահանջեց 140 միլիոն լիրա կրէդիտ:

Պատգամաւորների ժողով: Դահլիճը լի է: Դէֆէլիչէ և Բօսկո պատգամաւորների բարեկամները գիմաւորեցին նրանց բարձրաձայն բացականչութիւններով: Նիսաից առաջ Դէֆէլիչէ և Բօսկո երդուեցին առանց որ և է պատահարների: Ռուդինի կարդաց բացատրութիւն, որի ժամանակ յաճախ ընդհատում էին նրան հաւանութեան բացականչութիւններով: Ռուդինիի առաջարկութիւնը համարեա ընդունված է միաձայն:

ՄԱՍՍՕՎԱ, 6 մարտի: Գործերի դրութիւնը անփոփոխ է: Մենէլիքը դարձեալ Էնտիցօանն է: Իտալական մի մեծ քարավան աջողութեամբ հասաւ Կասսալա:

ԱՍՏՐԱԽԱՆ, 7 մարտի: Պետրօվսկից հեռագրում են, որ ահագին քանակութեամբ սառուց է կուտակված: 12 չոգենաւեր ջարդված են սառուցից: Մարդիկ սովամահ են լինում: Միջոցներ են ձեռք առնված պաշար հասցնելու համար:

ԿԱՆՆ, 7 մարտի: Ուէլսի իշխանը մարտի 5-ին նախաճաշեց Թագաժառանգ Ցէսարեվիչի մօտ:

ԼՕՆԴՕՆ, 7 մարտի: Համայնքների ժողով: Կէրզօն կարդաց այն հեռագիրները, որոնց վրա էին հիմնված նրա երէկվայ արած յայտարարութիւնները: Հեռագիրները հաղորդում են, թէ զէրվիշները պատրաստվում են յարձակվել Մուբարեան աղբիւրների վրա, թէ բազմաթիւ զօրաբաժին է դուրս եկել Օմդուրմանից և թէ Օսմանդիգմա արշաւանք է սկսել Կասսալայի դէմ և հրաւէր է կարդում արաբներին միանալ իր զօրքի հետ: Ապա հեռագիր է ստացված Սուակիմի հիւպատոսից, որով հաղորդում է շրջականերում տեղի ունեցած անկարգութիւնների և զէրվիշների պատրաստութիւնների մասին՝ յարձակում գործել Կասսալայի վրա:

Լորդերի ժողով: Լորդ Բոզբերէրիի հարցասղումին՝ վագեգալիա ուղարկվող զօրքի վերաբերմամբ, առաջին մինիստրը յայտնեց, որ վերարվարին եգիպտական կառավարութիւնը Անգլիայի ուշադրութիւնը դարձրեց այն վտանգների վրա, որ կարող էին ծագել զէրվիշների յարձակողական շարժումից, որի պատճառով զինուորական իշխանութիւնը առաջարկեց յարձակողական դիրք բռնել: Բոզբերի ցանկութիւն յայտնեց ներկայացնել այն հեռագիրները, որոնց մասին խօսվում է: Մարկիզ Սալսբիւրի հրաժարվեց կատարել Բոզբերիի ցանկութիւնը, պատճառ բերելով, թէ այդ հեռագիրներում զինուորական բնաւորութիւն կրող մանրամասնութիւններ կան, բայց կարդաց այն հեռագիրները, որոնք կարդացվեցին համայնքների ժողովում:

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, մարտի 1-ին: Ներքին երկրորդ փոխառութեան խաղարկութեան 500 ր. դումարները տարան հետևեալ տոմսերը.

Տոմսերի համարները

Սերիաների համարները

1: 3368, 4468, 6827, 9162, 13211, 16505, 16638, 17693.
2: 429, 4954, 9466, 12308, 13428, 18373, 18513, 19241.
3: 1205, 4895, 8375, 12172, 13061, 11700, 14449, 16371.
4: 120, 4085, 13800, 18624.
5: 1059, 1779, 8045, 10695, 14467, 13025.
6: 6949, 7109, 7637, 10410, 17649.
7: 93, 18052, 4297, 18571.
8: 725, 5074, 8146, 8327, 12214, 15676.
9: 5229, 6479, 2232, 11201, 14212, 16715.
10: 8111, 9423.
11: 3106, 12940, 13079, 16091, 16709, 16709, 18395.
12: 507, 6696, 6713, 5826, 4402, 10539, 14816, 16120, 17984, 19042, 19740.
13: 613, 8867, 11219.
14: 9086, 12469, 13298, 16067, 18141.
15: 593, 1307, 14460, 15189, 18354.
16: 2485, 7807, 10195, 13455, 19655, 19903.
17: 5065, 6265, 12407, 13609, 15920, 17791, 18426, 18675.
18: 11277, 15056.
19: 2580, 8632, 9228, 12441, 8854.
20: 7231, 12319, 17755, 19950.
21: 692, 2553, 3004, 16292, 18933.
22: 2208, 2873, 5745, 12098, 15078.
23: 7242, 17358.
24: 3518, 3687, 8852, 18966, 19993.
25: 3070, 3617, 11128.
26: 9801, 10677, 12488, 14368, 18320, 4420.
27: 368, 5298, 12053, 12835, 15860.
28: 151, 4009, 5062, 8449, 8666, 14736, 16407, 16421.
29: 8013, 8263, 9497, 16368, 18878.
30: 7547, 11905.
31: 519, 11633, 12192, 13503, 14416.
32: 13150, 15585.
33: 7904, 9108, 6406, 18309.
34: 2004, 9187, 18931, 19697.
35: 741, 6292, 11492, 12108.
36: 9153, 11187, 13147, 19433, 19523.
37: 3449, 8571, 13224.
38: 512, 3736, 3760, 3896, 4948, 5777, 6843, 8504, 14777, 18792.
39: 4027, 5527, 5795, 10295, 14192, 17209.
40: 7657, 9714, 9852, 13729, 14215, 19011, 19440.
41: 491, 6369, 7063, 9963, 18875.
42: 15670, 16548, 18839, 19419, 10682.
43: 1386, 13076, 14671, 15804.
44: 5404, 10334, 48371.
45: 8620, 16515, 17585.
46: 1115, 3425, 10319, 10778, 11461, 14644, 17924, 18367.
47: 839, 9556, 12941, 16524.
48: 1294, 1715, 7672, 11124, 17702, 18178.
49: 1980, 10279, 13029, 13476, 17310, 19480, 1670.
50: 4264, 7801, 11268; 13950, 14217, 19665.

—

ՏԻՐԱԺ ԴՈՒՐՍ ԵԿԱԾ ՍԵՐԵԱՆՆԵՐԻ №№.

1369, 3533, 12916, 2016, 9598, 1468, 12085, 3872, 6271, 7422, 4709, 3392, 6745, 15696, 18395, 11904, 1050, 7644, 10474, 4696, 4002, 2531, 1275, 16972, 6270, 8394, 15629, 8624, 2373, 18978, 6470, 13960, 7792, 11670, 15622, 9082, 1725, 17738, 13751, 6184, 2691, 19775, 10312, 11675, 11830, 14074. 27996, 5038, 15908, 9062, 17158, 12735, 8050, 724, 15869, 18621, 10319, 6734, 5565, 5723, 10532, 10, 13885, 577, 2649, 5543, 6124, 4301, 8039, 1897, 12037, 12022, 2947, 16243, 17422, 12228, 14674, 11569, 34, 19873, 5714, 16025, 2669, 389, 18955, 15385, 9613, 10195, 13932, 17808, 3479, 168, 15360, 17818, 2037, 1706, 19519, 15720, 19839, 12139, 10893, 17875, 14888, 5034, 5126, 13951, 15495, 10600, 17904, 9411.

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչ՝ ԱՆԴՐԷԱՍ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից:

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, սիֆիլիս և վենէրական հիւանդութիւնների:

Դ. Դ. ՁԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.

Կին-բժիշկ ԴՈՒՆԱՅԵՎԱ-ՐՈՒԴԵՆԿՕ—10—11 ժ. կանանց և երեխ. հ.

Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—12—1 ժ. ականջի, կոկորդի, քթի և կրծքի հ. երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ:

Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—12—1 ժ. ներքին, երեխայոց և նեարդային հ. երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ:

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—$1^{1}/_{2}$ ժ. ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—5—6 ժ. երեքշ. հինգշ. և շաբաթ:

Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—5—6 ժ. երկուշաբթի չորեքշաբթի և ուրբաթ:

Ա. Դ. ԳՈՒՐԿՕ—6—7 ժ. Սիֆիլիսի, մէզի և սեռական օրգանների հ. ներքին և մարթի հ.

Ա. Դ. ԳՈՒՐԿՕ քիմիական և խոշորացուցական հետազօտութիւններ է անում մէզի, խրխի, արեան, կաթի և այլն:

Վճար 50 կ.: Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին:

Հիւանդանոցի վերատեսուչ՝
բժշկապետ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ

Այս տարվայ մայիս ամսին լրանում է **ԱՒԵՏԵԱՑ ԵԿԵՂԵՑՈՒ** երկսեռ դպրոցների այժմեան հոգաբարձուների ժամանակամիջոցը, ուստի **ՆՈՐ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ** և անձնափոխանորդների ԸՆՏՐՈՒԹԵԱՆ համար, ամսիս 10-ին, կիրակի օրը ս. պատարագից յետոյ 12 ժամին հրաւիրվում են նոյն եկեղեցու յարգելի ծխականները՝ ժողով կազմելու պատգամաւորների ընտրութեան համար:

Գործակալ՝ Ղևոնդ աւագ քհ. Խարազեանց

1—1

ՎՐԱՑ ԱԶՆՈՒԱԿԱՆՆԵՐԻ ԹԱՏՐՕՆ

Կիրակի, մարտի 10-ին

Հայ դերասանական ընկերութիւնը, մասնակցութեամբ տ. Զաբէլի

Ց. ՕՀԱՆԵԱՆԻ

Առաջին դէբիւտի համար կը տայ

ԴՐԱԿԱՆ-ԴՐԱՄԱՏԻՐԱԿԱՆ ԵՐԵԿՈՅԹ

կը ներկայացնեն

ԳԱՂՏՆԻՈՅԺ

Դրամա 5 արարուածով, հեղ. Շպաժինսկի, թարգմ. Ց. Տէր-Գէորգեան

Տեղերի գինը սովորական է:

Սկիզբը երեկոյեան 8 ժամին:

(№ 28) 2—2

ՆԿԱՐՈՒՄ եմ ա ոլասի վրա, յայտնի հայ մարդկանց և զանազան ցանկացողների պատկերները: Բազմոցի ԲԱՐՁԻ ԵՐԵՍԻ համար 3—5 ռուբլի. ԼՈՒՍԱՄԱՓՈՓ—մեսաքսեայ կտորների վրա՝ 6 հայ գործիչների պատկերներով, 3—4 ռուբլի. ՄԵՏԱՔՍԵԱՑ ԹԱՇԿԻՆԱԿՆԵՐ 60 կ.—1 ռ.: ԺԱՊԱՒԷՆՆԵՐ վերոյիշեալ պատկերներով 20—25—30 կօպ.: Ցանկացողներին կարող եմ ուղարկել ամեն քաղաք:

Դիմել այս հասցէով՝ ТИФЛИСЪ, Кочубѣевская у. д. Дробышева, № 21. А. РОДІОНОВОЙ.

(№ 28) 2—4

«ԵԱՍԼԻ» ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ՄԱՆԿԱԿԱՆ ՀԻՒԱՆԴԱՆՈՑՈՒՄ

Ընդունվում են սաւ-վարակիչ հիւանդութիւններով (կարմրուկով, ծաղիկով, քութէչով, դիֆտերիտով) հիւանդացած երեխաներ: Ծծկեր երեխաները կարող են ընդունվել իրանց մայրերի կամ դայեակների հետ: Ընդունելութիւնը ամեն օր: Բժշկութիւնը և խնամատարութիւնը ձրի է: Հասցէն Վէրա, Ծղնէտսկի փողոց, տան Խալեապինի:

(№ 9) 10—10

ՔԻՄԻԱ-ԿՕՍՄԷՏԻԿԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ ՐԻՍ-ԳՈՒՏՄԱՆ

ԲԷՐԹԱ-ՐԻՍԻ



ԿՕՍՄԷՏԻԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

„ՈՎՄ-ՈՏՅԻՆ“

ամի դարդերանաս Կդչվան ձէս բրդիով

ԷՕԺԷՆԻԱՅԻ ՊԱՍՏԱ

երեսի մորթը կակղեցնելու համար պօմադ. ոչնչացնում է չուտով երեսի վրա եղած կարմիր բիծերը և մունները. այս միջոցը առաջ է բերումնաև երեսի թարմութիւն և գեղեցկութիւն։ Գինը 1 ր. 60 կ.

Elixir Mélange

Մազերը աճեցնելու և գլխի թեվը ոչնչացնելու հեղուկ։ Գինը 2 ր.

ԷՕԺԷՆԻ ՊՈՒԴՐԱ

սպիտակ, վարդագոյն և Բայէլ (թուխ գէմք ունեցողների համար) նա ամուր կերպով պահպանվում է մորթու վրա և բոլորովին անտեսանելի է աչքի համար, մորթուն տալիս է նոյնպէս խիստ կակղութիւն, առաձգութիւն և քնքշութիւն։ Գինը և 1 ր. 20 կ. 1 ր. 50 կ.

ԷՕԺԷՆԻ ԿԱՐՄԻՐ ՆԵՐԿ

հեղուկ վիճակի մէջ այտերին և ականջներին տալիս է բոլորովին բնական, վարդային գոյն որ ոչ ցերեկվայ, ոչ ելէքարական լոյսից չէ փչանում։ Գինը 1 ր. 50 կ.

ՄԻՐՏԱՅԻՆ ԲԱԼԶԱՄ

(պոմադա հեղուկ վիճակի մէջ), տալիս է երեսին, վզին, ձեռքերին քնքոյշ կակղութիւն և մարմարեանման մաքրութիւն։ Նա ոչնչացնում է արևհարքը, մունները և մորթու վրա եղած ամեն մի անհարթութիւն և տգեղութիւն։ Գինը 1 ր. 75 կ.

ՔԻՆԱ-ԳԼԻՑԵՐԻՆԱՅԻՆ

գլխի պօմադ Պերուանական բալզամով եփած՝ մազերը սնդացնելու, խտացնելու և աճեցնելու համար։ Գինը 2 ր.

ԽՈՒՆԴԱՅԻՆ ՊՕՄԱԴ

նրա գործածութիւնից յետոյ ձեռները սատանում են զարմանալի սպիտակութիւն և ճկունութիւն։ Գինը 1 ր. 30 կ.

ՈՒՆԴԱՐԱԿԱՆ ԷՍՍԷՆՑԻԱ

բեղերի համար (Ռիս-Գուտման) տալիս է նրանց անմիջապէս հարկաւոր ձևը, ամրացնում է նրանց և նպաստում է նրանց արագ աճման։ Գինը 75 կ.

ՆԵՐԿԵՐ ՄԱԶԵՐԻ ՀԱՄԱՐ

(Ռիս-Գուտման), սև, շագանակագոյն և խարտեաշ։ Այդ ներկով ներկված մազերը պահպանում են իրանց գոյնը 6 չաբաթվայ ընթացքում։ Գինը 3 ր.

Ծախվում է բոլոր դեղարարական և կօսմէտիական խանութներում։ Գլխաւոր պահեստը՝ Բարձրագոյն հաստատված՝ դեղարարական ապրանքների կովկասեան ընկերութեան մէջ Թիֆլիս և Բաքու։ (№ 26) 1—50

ՊԱՏԻՎ ԱԿԱՌ

Թաղը նստում է Լոփանովի դիմաց։

ՄԱԳՈՒՐ ԵՒ ՍՆԴԱՐՄԱՐ ՓՈՇԵՐ։

Առաջարկվում է կ. երեխանեն։

Գինը 4 կոպ.

Ուրախ վիկտորիա։

Մինչև պահեստ կովկասում՝ Բարձրագոյն Հաստատված դեղարարական ընկերութեան մէջ Թիֆլիս։

№ 120. 90 թ.

Ծառայեն կովկասեան ընկերութեան մէջ Թիֆլիսում և Բաքուում։ 42—50 (Ե)

ОТДАЕТСЯ МАГАЗИНЪ

въ домѣ Кукуджанова, на Пушкинской улицѣ, противъ православной семинаріи.

(Ե. Հ.) 5—5

ԼՈՒՄԱՅ

ԳԱԲՕԻ ԸՆՏԱՆԻՔԸ

ՎԷՊ ԹԻՖԼԻՍԻ ԿԵԱՆՔԻՑ

ԳԻՆՆ Է 60 ԿՕՊ.

Դիմել այս հասցէով՝ Тифлисъ, Типографія Главноначальствующаго, Сергѣю Назарьянцу. ԹԻՖԼԻՍՈՒՄ վաճառվում է նաև կենտրօնական և կովկասեան գրավաճառանոցներում։ ԲԱԳՈՒ ծախվում է Շիրազեանցի գրախանութում։

(№ 64) 3—5

Մամուլի տակից դուրս եկաւ

ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՆՈՐ-ՈՒԽՏԻ

(չարունակութիւն և վերջ. հատոր գ.)

„ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՅ“

ՍԱՀԱԿ ԲՀ. ՍԱՀԱԿԵԱՆՑ

(№ 16) 5—5

ԾԽԱԽՈՏԻ ԳՈՐԾԱՐԱՆ

Ն. Յ. ԲՈԶԱՐՋԵԱՆՑԻ

Գոյութիւն ունի 1858 թուականից

ԳՈՐԾԱՐԱՆՆ ԱՐԺԱՆԱՅԵԼ Է ԱՄԵՆԱԲԱՐՁՐ ՊԱՐԳԵՒՆԵՐԻ

ՓԱՍՏ ԵՒ ՈՉ ԻՆՔՆԱԳՈՎՈՒԹԻՒՆ

Ցանցանք համարելով ի վնաս ծխողների թանգացնել և գեղեցկացնել ծխախոտի արկղները և փաթեթները *), ես աւելի լաւ եմ համարում պարոններ ծխողներին տալ բարձր տեսակի ծխախոտ, քան արտաքուստ գեղեցիկ փաթեթներ։ Խնդրում եմ ուշադրութիւն դարձնել մեր բոլոր արտադրութիւնների վրա. նրանց յատկութիւնը բարձր է ամեն մրցումից և նրանք արժանի են ուշադրութեան՝ իրանց բարձր յատկութեամբ, որին կարելի է հասնել միայն աշխատելով և ծախս անելով, միայն ծխախոտի յատկութիւնը լաւացնելու և ոչ թէ արտաքին փաթեթները գեղեցկացնելու վրա։ Պարոններ ծխողներին խնդրում եմ փորձել անձամբ և համոզվել։

1896 Թ. ՅՈՒՆՎԱՐԻ 1-ԻՑ ԻՄ ԳՈՐԾԱՐԱՆՈՒՄ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ԵՆ ՀԵՏԵՒԵԱԼ ԾԽԱԽՈՏՆԵՐԸ ԵՒ ԳԼԱՆԻԿՆԵՐԸ

ՊԱՊԻՐՕՍՆԵՐ	ՊԱՊԻՐՕՍՆԵՐ	ԾԽԱԽՈՏ
(Գլանիկներ)	(Գլանիկներ)	
ՇԱԳԱՆԱԿԱԳՈՅՆ Ֆրանսիական թղթից, քիմիապէս հետազօտված № 5 „ԷԿՍՏՐԱ“ 25 հատը 15 կ., 100 հ. 60 կ. 25 հատը 25 կ., 100 հ. 1 ր.	ՍՊԻՏԱԿ թղթից № 36 ԻՒԺՆԸՅԱ 10 հատը 3 կոպ.	Կովկասեան, սկսած 48 կօպէկից մինչև 3 բուբլի ֆունտը։ Մաքուր տաճկական, թիթեղեայ արկղների մէջ, սկսած 4 բուբլիից մինչև 12 ր. ֆունտը։

ԾԽԱԽՈՏ ՏԱՃԿԱԿԱՆ ՍԵՐՄԵՐԻՑ ՖՈՒՆՏԸ 1 ԲՈՒԲԼԻ 52 ԿՕՊԷԿ

կարելի է ստանալ ամեն տեղ։ Օտարաքաղաքացիների պատուէրները կատարվում են արագ և ճշդութեամբ։

Ցարդանք՝ գործարանատէր Ն. ԲՈԶԱՐՋԵԱՆՑ

*) Թանկագին փաթեթները և արկղը միայն վնասում են ծխախոտի լաւ յատկութեան։ (№ 28 Ե. Հ.) 2—5

Գրքերի տեղը № 100

Գրքերի տեղը № 181

ԿԱԿԱՕ ԲԼՕՕԿԷՐ

ՍՆՆԴԱՐԱՐ ԽՄԻԶՔ, արկղիկներում, 1/1, 1/2, 1/4 և 1/8 կիլոգրամ։

(GRAND PRIX) Բարձրագոյն պարգև։ Անտվերպէնի 1894 թուի համաշխարհային ցուցահանդիսում։

Գլխաւոր պահեստը՝ դեղարարական ապրանքների Բարձրագոյն հաստատված կովկասեան ընկերութիւնը Թիֆլիսում։ (№ 6) (Ե) 9—50

ՕԺԻՏԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՂՋԿԵՐԱՆՑ ՀԱՄԱՐ

ՀԻՄՆԱԿԱՆ ԵՒ ՊԱՀԵՍՏԻ ԴՐԱՄԱԳԼՈՒԽՆ է 23,000,000 բուբլի։ Ընկերութեան տոկոսաբեր թղթերը պահվում են պետական բանկում։

Ծնողներին, խնամատարներին և առհասարակ այն անձանց, որոնք ցանկանում են ապահովացնել աղջկանց ապագան, „ՐՕՍՍԻԱ“ ընկերութիւնը առաջարկում է ՕԺԻՏԻ (բաժինք) ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆԸ։

Օրինակ, եթէ ցանկանում են երկու ամեայ աղջկայ համար ապահովացնել 5000 ՐՈՒԲԼԻ ՕԺԻՏ, այնպէս որ, 18 ՏԱՐԵԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԻՆ ստանան այդ գումարը, (այսինքն 16 տարուց յետոյ), այն ժամանակ այդ տեսակ ապահովագրութեան համար ապահովագրողը „Ռօսսիա“ ընկերութեանը պիտի վճարի ամեն 3 ամսից յետոյ 52 բուբլի։

Սոյնանման ապահովագրութիւններ կարելի է կայացնել նաև այն պայմանով, որ ապահովագրողին անմիջապէս վերադարձվին բոլոր իր վճարած տուրքերը (պրէմիաները,) եթէ միայն ապահովագրված երեխան վախճանվի պայմանաւորեալ ժամանակից առաջ։

1895 թուի յունվարի 1-ին „ՐՕՍՍԻԱ“ ընկերութեան մէջ ապահովագրված էին 31,701 անձինք 83,708,760 բուբլի դրամագլխով։

Տղայ երեխաների համար ևս կարելի է ապահովացնել դրամագլուխ նոյն կերպով, ինչպէս աղջկանց, և այդ դրամագլուխը կը ստացվի իբրև թոշակ (պէնսիա) կրթութիւնը շարունակելու համար, եթէ միայն ապահովագրած երեխան կապրի մինչ պայմանաւորեալ ժամանակամիջոցը։

Ապահովագրութեան մասին յայտարարութիւններն ընդունվում են և ամեն տեսակ տեղեկութիւններ հաղորդվում են Վարչութեանը Ս. Պետերբուրգում (Большая Морская, սեփական տուն, № 37), կովկասեան շրջանի համար ընկերութեան Վարչութեան մէջ, որ գտնվում է՝

ԹԻՖԼԻՍՈՒՄ, Սերգիևսկայա փ. տ. № 6. (երկրորդ յարկում) և բոլոր գործակալութիւններում կայսրութեան բոլոր քաղաքներում։

(№ 71) (Հ.) 17—52

„ՄՇԱԿԻ“ ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ

Վաճառվում են հետևեալ հայերէն գրքերը Գինը

1) ԷՎԷԼԻՆԱ, Գրիգոր Արծրունու . . . . . 50 կօպ
2) ԹԻՒՐՔԱՑ ՀԱՅԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆ, Գ. Արծրունու 20 „
3) ՄՏՔԻ ՄՇԱԿԸ, Խ. Մալումեանի. . . . . 50 „
4) ՍԱՍՈՒՆ, Ա. Քալանթարի. . . . . 20 „

Օտարաքաղաքացիները կարող են վճարը փողի տեղ ուղարկել պօստային մարկաներով։ (№ 59) 1—10

Дозволено цензурою, Тифлисъ, 8 Марта 1896 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. 1ая.